

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՎ  
ԱՌԵՎՏՐԱՅՆԱՑՈՒՄ**

**ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԳԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԻՆԹԵԶՄԱՆ ԶԵԿՈՒՅՑ**

Հունիս 9, 2017 թ.

## Երախտիքի խոսք

Սույն զեկույցը և տեխնիկական հայտագիրը պատրաստել են Համաշխարհային բանկի խմբի աշխատակիցները և խորհրդատուները՝ պրն. Բեկզոդ Շամսինի (գյուղատնտեսության ավագ տնտեսագետ) և տկն. Արուսյակ Ալավերդյանի (գյուղատնտեսության ավագ մասնագետ) ղեկավարությամբ և պրն. Գարի Քրիստենսենի (խորհրդատու և ընդհանուր տեքստի հեղինակ), պրն. Հայնց Ստրաբենհոֆի (գործողությունների ավագ պատասխանատու), պրն. Պատրիկ Լաբաստի (խորհրդատու), տկն. Տեյի Բորոֆիսի (մասնավոր հատվածի զարգացման ավագ պատասխանատու), պրն. Արսեն Նազարյանի (գործողությունների պատասխանատու), և Մարկո Բաքիկի (խորհրդատու) մասնակցությամբ:

Տեխնիկական հայտագրի մշակմանը մեծապես նպաստել է Համաշխարհային բանկի խմբի մեծ թվով աշխատակիցների և խորհրդատուների կատարած իրավիճակի ուսումնասիրությունը և վերլուծությունը:

Հայաստանի պտուղ-բանջարեղենի արտահանման ընդլայնում աճի համատեքստում

Պատրիկ Լաբաստ, Արա Կարապետյան, Հայնց Ստրաբենհոֆ, Արսեն Նազարյան, Գագիկ Գաբրիելյան և Գարի Քրիստենսեն

Հայաստանի պտուղ-բանջարեղենի արտահանման ընդլայնում, միջազգային փորձից քաղված դասերը

Պատրիկ Լաբաստ

Գյուղատնտեսական խորհրդատվության հզորացում, առաջադիմություն

Դեյվիդ Լազ

Սննդամթերքի անվտանգություն. հետագա քայլերը

Արտավազդ Հակոբյան, Արա Կարապետյան, Արմեն Պողոսյան և Գարի Քրիստենսեն

Գյուղատնտեսության ապահովագրություն. Կենտրոնական և Հարավային Եվրոպայի միջին եկամուտ ունեցող երկրների և ԱՊՀ երկրների փորձը

Ռոման Շինկարենկո, Լիահ Անն Սոռոկա և Անդրիյ Զառիպով

Գյուղատնտեսական հողերի շուկաների հզորացում

Դավիդ Եգիաշվիլի

2010-2014 թթ. գյուղատնտեսության հանրային ծախսերը, միտումներն ու

Արմեն Պողոսյան և Գարի Քրիստենսեն

## հետևանքները

Իրենց աջակցությամբ և ուղղորդմամբ զեկույցի պատրաստմանն օժանդակել են Դայանա Ամալի Դայնինգերը Համաշխարհային բանկից և Մուհամեդ Մանսուրին ՊԳԿ-ից: Օգտակար դիտողություններ և առաջարկներ են ներկայացրել Արմեն Բարխուդարյանը, Գոհար Գյուլումյանը, Մայա Թեգադեն, Կատերինա Օնուլը, Սառա Մայքլը, Սթիվեն Գոսսը, Վիկտորյա Սթեյնլին և Բրետ Քոլմանը: Իվան Իվանովը, Ռաֆայել Գուլբերովսկին, Ալեքսանդր Միխայելովիչը և Մառա Օկմանն իրենց կարծիքներով ու մտքերով նպաստել են Մոսկվայում գյուղատնտեսական և պարենի առևտրականներին արված ուսումնական այցի նախապատրաստմանը: Էմանուել Հիդիերը (ՊԳԿ) համակարգել է ՊԳԿ-ի Ներդրումային կենտրոնի ագրոբիզնեսի խմբի առաջարկները, այդ թվում՝ Անդրիյ Յարմակի, Դմիտրի Պրիխոդկոյի, Իննա Պանդայի, Նադյա Ջվելկիչի: Խումբը շնորհակալ է նաև Մարինա Սահակյանին և Վալենտյա Քոուպլենդին զեկույցի պատրաստման ընթացքում ցուցաբերած աջակցության համար:

## I. ՆԱԽԱԴԹՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

**Հայաստանի գյուղատնտեսության ռազմավարությունը<sup>1</sup> նպատակ է հետապնդում հասնել կատարելագործված ազգային պարենային ապահովության և ինքնաբավության, ինչպես նաև արտահանման ծավալների աճի:** Դրա հիմնական խնդիրներն են գյուղատնտեսական արտադրանքի աճը, պարենային ապահովության կատարելագործումը, ոլորտի արդիականացումն ու առևտրայնացումը, ֆերմերային և ոչ ֆերմերային գյուղական զբաղվածությունը: Այս նպատակները պատասխանում են ոլորտում առկա մարտահրավերներին, սակայն դրանց համաձայնեցումը և դրանց հասնելը հեշտ չի լինի: Օրինակ՝ պարենային անվտանգությունն ապահովելու նպատակով ցորենի արտադրության ինքնաբավության աճի շեշտադրումը հակասում է ժամանակակից, առևտրայնացված գյուղատնտեսության ոլորտ ստեղծելու երկարաժամկետ կարիքներին, որը կարտադրի և կարտահանի համեմատական առավելություններին համապատասխան: Հայաստանի համեմատական առավելությունները կապված են պտուղ-բանջարեղենի արտադրանքի հետ, ոչ թե ցորենի: Բացի այդ, գյուղական շրջաններում ֆերմերային և ոչ ֆերմերային զբաղվածությանն ուղղված փոփոխությունների անհրաժեշտությունն այն մարտահրավերն է, որը հատուկ է բոլոր անցումային երկրներին, բոլորն են ջանում լուծել այն:

**Այս ռազմավարության ուսումնասիրությունը, որ վերջերս կատարել է Համաշխարհային բանկի խումբը (ՀԲԽ), հիմք է տալիս եզրակացնելու, որ թեև այն**

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թթ. կայուն զարգացման ռազմավարություն: Ներկայումս թարմացվում է 2015-2025 թթ. համար:

համապատասխան շրջանակներ է ապահովում ոլորտի զարգացման համար, այնուամենայնիվ չափից մեծ շեշտադրում կա կարճաժամկետ նպատակների վրա, այն է՝ գյուղատնտեսական արտադրանքի ծավալների մեծացում և պարենային ապահովության բարելավում<sup>2</sup>, ինչը կատարվում է ոլորտն արդիականացնելու և գյուղական զբաղվածությունը մատչելի դարձնելու երկարաժամկետ միջոցառումների հաշվին: Այս անհավասարակշռությունը կարող է վնասել ոլորտի երկարաժամկետ զարգացումը: Կառավարությունը նույնպես, ոլորտի կայուն զարգացման երկարաժամկետ պահանջների հաշվին, իր սուղ բյուջետային միջոցներից բարձր և հարաճուն մասնաբաժնով հատկացումներ է կատարում արտադրողականության բարձրացման և պարենային ապահովության բարելավման նպատակով: Այս ուղղվածությունն արտացոլում է Հայաստանի մտահոգությունը՝ կապված ազգային պարենային ապահովության հետ, սակայն վտանգ կա, որ դա կհանգեցնի ներկայիս ինքնաբավության հենքի վրա արտադրության աճի, բայց ոչ ֆերմաների սեփականության ու կառավարման համակարգերի ավելի արմատական վերակառուցման և գյուղատնտեսության արդիականացման ու առևտրայնացման:

**Գիտակցելով** ոլորտի այս երկարաժամկետ նպատակների իրագործման համար աջակցության ավելացման անհրաժեշտությունը՝ ՀԲԽ-ն, կառավարության համաձայնությամբ, կպատրաստի գյուղատնտեսության արդիականացման և առևտրայնացման իրագործման խոր ու բազմակողմանի ուսումնասիրություն/վերանայում: Չնայած արժեշտների բացահայտման և գյուղատնտեսական կոոպերատիվների հիմնադրման ուղղությամբ վերջերս կատարված զգալի աշխատանքին՝ ներկայիս գործունեությունն առաջ ընթանալու ծավալուն երկարաժամկետ տեսլական չունի: Կառավարությունը դեռևս չի կողմնորոշվում, թե ինչպես վերացնել արտահանումներով պայմանավորված աճ ապահովող ապագայի և փոքրածավալ, կիսաինքնաբավ ֆերմաներով ու փոքր (թեև շարժուն) ագրոբիզնեսով պայմանավորված ներկայի միջև եղած անջրպետը: Վերանայման նպատակն է ներկայացնել կառավարության հետ քննակումների շրջանակը Հայաստանի գյուղատնտեսության արդիականացման և առևտրայնացման շուրջ, որը Հայաստանի ներկայիս գյուղատնտեսության ոլորտի ռազմավարության առանցքային նպատակն է: Քանի որ առաջարկություններից մի քանիսը զգալիորեն շեղվում են ընթացիկ քաղաքականությունից, ուսումնասիրությունը նախագծված է այնպես, որ ձևավորի և տեղեկացնի հետագա քննարկումների նյութը, ոչ թե ծառայի որպես գործունեության «հետագա քայլեր»:

Ուսումնասիրությունը կենտրոնանում է գյուղատնտեսության ոլորտի արդիականացման և առևտրայնացման համար առավել համապատասխան համարվող թեմաների և ոլորտների վրա: Ուսումնասիրության նախնական նպատակն էր վերանայել գյուղատնտեսական մարքեթինգը, վերամշակումը և արտահանումը, սննդամթերքի անվտանգությունը, գյուղացիական

<sup>2</sup> Կարճաժամկետ նպատակներ և երկարաժամկետ արդյունքներ, Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի զարգացում, օգոստոս, 2015 թ.:

«կոռպերացիան», ներառյալ՝ ֆերմերային խմբերը, գյուղատնտեսական խորհրդատվությունը և գյուղատնտեսության ապահովագրումը: Թեմաների ընտրությունը հետագայում ձևափոխվեց՝ հաշվի առնելով հետևյալը. (i) խուսափել արդեն իսկ կատարված աշխատանքի կրկնությունից, (ii) ավելի ինտենսիվ անդրադառնալ ՀԲԽ-ի՝ այլ երկրներում կատարած աշխատանքին, (iii) ավելի անմիջականորեն անդրադառնալ համապատասխան երկարաժամկետ խնդիրներին և (iv) նպաստել համապատասխան հարցերի շուրջ քննարկումներին, որոնց մասին քիչ տեղեկատվություն էր հայտնի: Առաջարկվող մարքեթինգի, վերամշակման և արտահանման վերանայումն այն ոլորտն էր, որն արդեն լավ ուսումնասիրվել էր, ուստի այն փոխարինվեց արտահանմամբ պայմանավորված գյուղատնտեսական արդյունաբերության զարգացման միջազգային հաջողված փորձի ուսումնասիրությամբ: Բացի այդ, ոլորտի գյուղացիական «կոռպերացիայի» ուսումնասիրությունը նույնպես լայնորեն է կատարվել, ուստի այն փոխարինվել է գյուղատնտեսական հողերի շուկաների վերլուծությամբ: Ինչպես «կոռպերացիան», այնպես էլ հողերի շուկաները շատ տեղին են ֆերմաների չափերի մեծացման համար, ինչը կնպաստի մրցունակության բարձրացմանը: Հողերի շուկաներն այս խնդրի ավելի կառուցողական, երկարաժամկետ լուծում են, ինչը, սակայն, մինչ այժմ քիչ ուշադրության է արժանացել: Վերջապես, ավելացել է գյուղատնտեսության հանրային ծախսերի վերլուծությունը, որը գաղափար կտա հանրային ծախսերի վերաբերյալ՝ ոլորտի երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակների տարբերության մասով:

**Վերանայումն ուրվագծում է երկարաժամկետ շրջանակի տարրերը՝ հիմնվելով պտուղ-բանջարեղենի արտահանման պարսային/կլաստերային ինստիտուցիոնալ դաշտի կառուցման վրա և առաջարկում է առաջնահերթ դարձնել դրա հետ կապված գյուղատնտեսական խորհրդատվության զարգացումը, սննդամթերքի անվտանգությունը, գյուղատնտեսական հողերի շուկաները և գյուղատնտեսական ռիսկերի կառավարումը:** Այգեգործությունը դիտվում է որպես առևտրայնացման և արդիականացման վեկտոր՝ շնորհիվ դրա արտահանման ներուժի: Առաջարկվող շրջանակը կարող է աճ և փոփոխություններ ապահովել ողջ ոլորտում, եթե ոլորտի վրա ազդեցության համար խորհրդատվության, սննդամթերքի անվտանգության, հողերի շուկաների և ռիսկերի կառավարման աջակցություն լինի:

## **II. ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ և ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Վերանայումը կազմված է առաձին հայտագրերից, որոնք տեղին են գյուղատնտեսությանն առնչվող բոլոր հարցերի համար: Ըստ հնարավորության՝ հայտագրերը ներկայացնում են համանման մարտահրավերներ ունեցող երկրների միջազգային փորձը, որոնք կարող են էլ ավելի նպաստել որոշումների կայացմանն այն առումով, թե ինչպես արդիականացնել և առևտրայնացնել գյուղատնտեսությունն ընդհանրապես և այգեգործությունը՝ մասնավորապես: Տեխնիկական հայտագրերը հետևյալն են.

1. Հայաստանի պտուղ-բանջարեղենի արտահանման ընդլայնում. աճի համատեքստը.
2. Հայաստանի պտուղ-բանջարեղենի արտահանման ընդլայնում. միջազգային փորձից քաղված դասերը.
3. Գյուղատնտեսական գիտասփյուռի (խորհրդատվության) հզորացում. հետագա քայլերը.
4. Սննդամթերքի անվտանգության արդիականացումը Հայաստանում. հետագա քայլերը.
5. Գյուղատնտեսության ապահովագրություն. Կենտրոնական և Հարավային Եվրոպայի միջին եկամուտ ունեցող երկրների և Անկախ պետությունների համագործակցության փորձը.
6. Գյուղատնտեսական հողերի շուկաների հզորացում.
7. 2010-2014 թթ. գյուղատնտեսության հանրային ծախսերը. միտումներն ու հետևանքները:

Այս հայտագրի շարունակությունը ներկայացնում է տեխնիկական հայտագրերի հիմնական եզրահանգումների և առաջարկությունների սինթեզը:

### III. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ և ԱՌԵՎՏՐԱՅՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

**Աճի հիմքերը պետք է փոխել, որպեսզի Հայաստանի գյուղատնտեսության ոլորտը շարունակի ցուցաբերել 2000 թվականից ի վեր ձեռք բերված կայուն աճը:** Գյուղատնտեսական արտադրանքի իրական արժեքը 2000-2015 թթ.<sup>3</sup> ընթացքում աճել է 86%-ով, տարեկան՝ միջինը 5,4%-ով, ինչը պայմանավորված է թե՛ գների, թե՛ արտադրանքի ծավալի աճով: Տեղական և արտահանման շուկաներում պահանջարկի աճի շնորհիվ բարձրացել են մի շարք ապրանքների իրական գները, բացի այն հիմնական սննդամթերքներից, ինչպիսիք են ցորենը, կարտոֆիլը, կաթը, թոչնամիսը և ձուն: Սակայն միջնաժամկետում գների շարունակական աճի հեռանկարն աղոտ է՝ պայմանավորված ավանդական արտահանման շուկաների ճգնաժամային պայմաններով և ներքին շուկաներում ցածր պահանջարկով ու աճող մրցակցությամբ: Ավելին, աճ ապահովող արտադրությունը սկսել է աճել շատ ցածր հիմքից, որտեղ մշակաբույսերի և անասնապահության արտադրողականության մակարդակը ցատ ցածր է համեմատական ագրոկլիմայական պայմաններ ունեցող ՏՀԶԿ (OECD) երկրներից: Ավելին, կայուն արտադրողականության աճ ապահովելու համար կպահանջվի անցնել ավելի ժամանակակից արտադրական համակարգերի, որոնք անհարմար են հայկական գյուղատնտեսությունում գերիշխող փոքր, կիսաինքնաբավ տնտեսությունների համար: Իսկ 2012 թվականից ի վեր ոլորտի իրական դանդաղ աճի տեմպերը

<sup>3</sup> Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն:

(տարեկան միջին աճը 2012-2015 թթ. կազմում է 2,2%) ցույց են տալիս, որ գների և արտադրության աճի հիմքում ընկած պայմանները, որոնք առաջ էին բերում նախկին աճը, այլևս կիրառելի չեն:

**Հայաստանի գյուղատնտեսության զարգացման ռազմավարությունը մեծ նախապատվություն է տալիս գյուղատնտեսության արդիականացմանն ու առևտրայնացմանը:** Տեղական և արտահանման շուկաներում մրցակցության կարողությունները հզորացնելու համար անհրաժեշտ են ժամանակակից արտադրական, վերամշական և մարքեթինգի տեխնոլոգիաներ, իսկ այդ շուկաներում պետք է վաճառվի արտադրանքի շատ ավելի մեծ մասնաբաժին, որպեսզի ոլորտն աճի և օգուտներ քաղի արտահանման իր հայտնի ներուժից: Հայաստանի փոքր և բաց տնտեսության համար, որտեղ տեղական շուկան շատ փոքր է, իսկ գյուղատնտեսությանն աջակցելու համար պետության հնարավորությունը՝ սահմանափակ, այս նպատակների իրագործումը հատկապես կարևոր է: Հետագա աճի համար ամենաիրատեսականը ժամանակակից, արտահանումով պայմանավորված գյուղատնտեսության ոլորտն է՝ կառուցված գոյություն ունեցող համեմատական առավելության վրա:

**Հայաստանի գյուղատնտեսությունը լավ դիրք ունի արտահանման շուկաներում, իսկ հետագա կայուն աճի համար՝ ներուժ:** Գյուղատնտեսական ապրանքների արտահանումը (գինի և ըմպելիքներ, ծխախոտ, ձկնեղեն, պտուղ-բանջարեղեն), շարունակելով վերջին տարիների կայուն աճը, շեշտակի վերելք է ունեցել 2003-2015 թթ. ընթացքում՝ 79,1 մլն ԱՄՆ դոլարից մինչև 398,0 մլն ԱՄՆ դոլար: Ագրոարտահանման աճը հատկապես մեծ էր 2010-2013 թթ. ընթացքում, երբ այն կրկնապատկվեց: 2013 թ. սկսած՝ նվազ աճ է արձանագրվել, ինչը պայմանավորված էր 2014 թ. ցածր գյուղատնտեսական արտադրությամբ և 2015 թ. Ռուսաստանի տնտեսության վիճակի վատթարացմամբ: Այնուամենայնիվ ագրոարտահանումը մնում է ընդհանուր արտահանման հիմնական բաղադրիչը: 2015 թ. այն կազմել է ընդհանուր արտահանման 26%-ը (1,48 մլրդ ԱՄՆ դոլար): Առևտրի և գների ներկա քաղաքականությունը թույլ ազդեցություն ունի հայաստանյան արտահանումների մրցակցության վրա՝ պայմանավորված Հայաստանի ազատականացված տնտեսական միջավայրով, որտեղ ցածր է առևտրի պաշտպանվածության մակարդակը և նվազագույն են միջամտությունները տեղական շուկաներում: Սակայն Հայաստանի՝ ԵՏՄ-ին անդամակցելու որոշումը<sup>4</sup>, որ ուժի մեջ մտավ 2015 թ. հունվարի 1-ին, կարող է փոխել այս իրավիճակը: Ինչպես միության մյուս անդամները, Հայաստանը ևս պետք է ընդունի ԵՏՄ-ի ընդհանուր արտաքին սակագները 5-7 տարվա անցումային ժամանակահատվածից հետո: Քիչ հավանական է, որ դրա անմիջական ազդեցությունն առևտրի վրա զգալի լինի, քանի որ գոյություն ունեցող առևտուրն արդեն ԵՏՄ անդամ երկրների հետ է, իսկ այս երկրների հետ գոյություն ունեն երկկողմ առևտրային պայմանագրեր: ԵՏՄ-ի անդամակցությունն այսպիսով

<sup>4</sup> ԵՏՄ-ի կազմում են Ռուսաստանը, Հայաստանը, Բելառուսը, Ղազախստանը և Ղրղզստանը:

կամրապնդի Հայաստանի գյուղատնտեսական արտադրանքի թե՛ գրավչությունը, թե՛ արտահանողների կախվածությունը Ռուսաստանից:

**Ոլորտի հետագա աճն ավելի շատ պայմանավորված կլինի ֆերմերների և ագրո-վերամշակողների շրջանում արտադրողականության աճով, ինչպես նաև արժեք ավելացնելու և արտահանման շուկաներում մրցակցելու կարողությամբ:** Խաղողի և ծիրանի մրցունակության վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ 2004-2014 թթ. ողջ ընթացքում դրանց գները մրցունակ են եղել՝ թուրքական արտահանման համեմատ: Այս վերլուծության հիմնական արդյունքը նաև այն է, որ չնայած հայաստանյան արտադրանքը կարող է մրցակցել, նրա փաստացի մրցունակությունը կարող է տարեցտարի փոխվել: Ուստի մրցունակությունը պահելու համար արտադրողներն ու արտահանողները պետք է մշտապես նորարարության, արտադրողականության բարձրացման և ծախսերը նվազեցնելու ուղիներ փնտրեն:

Արտադրողականության և արտահանման հետագա աճն ապահովելու համար միասնական ջանքեր են պահանջվում Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի ռազմավարության առանցքային երկարաժամկետ բաղադրիչները՝ գյուղատնտեսության արդիականացումը և առևտրայնացումն իրագործելու համար: Այս նպատակին հասնելու համար Հայաստանը պետք է շարունակի զարգացնել իր շուկան և վերաճել մրցակցային արտահանման միտված արդյունաբերության՝ իր համեմատական առավելությունը մրցակցային առավելություն դարձնելու միջոցով: Դա կպահանջի այնպիսի քաղաքականություն, որը կբարելավի մասնավոր հատվածի համար բարենպաստ միջավայրը, կկատարելագործի մաքսային ընթացակարգերը, իսկ սահմանային տարանցիկ փոխադրման ընթացակարգերը կհամապատասխանեցնի առևտրային գործընկեր երկրների կանոնակարգերի հետ, ինչպես նաև ներդրումներ կապահովի տրանսպորտի և շուկայական ենթակառուցվածքների (այդ թվում՝ սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգերի) համար: Անհրաժեշտ է շարունակել համեմատական առավելության կառուցումը, և քանի որ երկիրը լուրջ խոչընդոտների առջև է կանգնած, պետք է ստեղծել մրցակցային առավելություն տեխնոլոգիաների, ֆիզիկական և մարդկային կապիտալում ներդրումներ կատարելու միջոցով: Համաշխարհային բանկի աջակցությունն այս օրակարգին ընդգրկում է հնարավոր բարեփոխումների և ներդրումների վերանայում և գործողությունների առաջնահերթությունների գնահատում:

**Այս օրակարգը կներառի նաև հատուկ միջոցառումներ գյուղատնտեսության ոլորտում զենդերային անհավասարությունը վերացնելու համար:** Փաստորեն, գյուղատնտեսությունում աշխատող գյուղաբնակները հաճախ գերակշռում են աղքատ բնակչության շրջանում Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում ընդհանրապես և Հայաստանում՝ մասնավորապես: Գյուղաբնակ կանայք համարվում են հատկապես խոցելի, քանի որ շատ հաճախ հողի կամ ագրոֆիզնեսի իրավական սեփականատեր չեն և աշխատում են որպես ցածր հմտություն ունեցող բանվորներ: Այդ միջոցառումները կարող են ներառել,



օրինակ, իրախուսման և/կամ քվոտաների սահմանման մեխանիզմներ՝ որոշումներ կայացնող մարմիններում կանանց ներկայացվածությունն ապահովելու համար, ֆինանսավորման գործիքների մշակում, որոնք կարևորում են կանանց գլխավորած ագրոբիզնեսները և շուկայի կամ ֆինանսական հնարավորությունների իրազեկում՝ ուղղված կանանց (տարածելով դրանք այն վայրերում և ԶԼՄ-ներով, որոնք կանայք ավելի հաճախ են այցելում և դիտում):

#### **IV. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Ստորև ամփոփված են տեխնիկական հայտագրերի հիմնական եզրակացություններն ու առաջարկությունները՝ որպես ՀՀ կառավարության հետ քննարկումների հիմք բարեփոխումների և ներդրումների հիմնական տարբերակների շուրջ:

##### **4.1 Պտուղ-բանջարեղենի արտահանումը**

Հայաստանի դինամիկ, արտահանման կողմնորոշում ունեցող պտուղ-բանջարեղենի արտադրությունն առանցքային շարժիչ ուժ է գյուղատնտեսության ոլորտի հետագա աճի համար և ոչ միայն այն պատճառով, որ արտադրության ավելացման և արտահանման ներուժ ունի, այլև այն պատճառով, որ ակնկալվում է դրա դրական ազդեցությունն այլ ենթաճյուղերի վրա: Հայաստանի պտուղ-բանջարեղենի արտահանման համեմատական առավելությունը, այնուամենայնիվ, հիմնականում պայմանավորված է թարմ մրգի և բանջարեղենի արտահանումով, ինչպես նաև ժամանակակից գիտելիքներով ու տեխնոլոգիաներով արտադրվող ու արտահանվող բարձրարժեք ապրանքներով: Հայաստանի անդամակցումը Եվրասիական տնտեսական միությանը (ԵՏՄ) նաև ամրապնդեց երկրի խիստ կախվածությունը ռուսական շուկաներից, ուր արտահանվում է պտուղ-բանջարեղենի 80%-ը: Մրցակցությունն այս շուկաներում ուժեղ է, հատկապես՝ վերամշակված ապրանքների գծով: Մրցակցությունն էլ ավելի կուժեղանա՝ ի պատասխան նոր մրցակիցների, օրինակ՝ Իրանի մուսք գործելուն և վերջերս Ռուսաստանի կառավարության՝ թարմ ու վերամշակված գյուղատնտեսական արտադրանքի խթանման հանձնառության: Հետևաբար, երկարաժամկետ առումով, գյուղատնտեսության արդիականացումը պետք է կատարվի նաև դեպի այլ շուկաներ ապրանքների տարատեսակավորման (**դիվերսիֆիկացման**) միջոցով:

Առևտրայնացման և արդիականացման համար անկասկած անհրաժեշտ է ստեղծել բարելավված նպաստավոր միջավայր արտադրության (ավելի արդյունավետ արտադրություն և հավաք, մշակաբույսերի ռիսկերի բարելավված կառավարում) և արտահանման (սննդամթերքի անվտանգություն, մաքսային ընթացակարգեր, սահմանային փոխադրումներ), ինչպես նաև ֆիզիկական ենթակառուցվածքներում ներդրումների ավելացման (պահեստավորում,

լոգիստիկայի հարցեր) համար: Մակայն այս ամենը բավարար չէ: Այդ ներդրումների արդյունքում բարելավված արդյունավետությամբ հանդերձ՝ Հայաստանի արտահանումը դեռ կբախվի զգալի կառուցվածքային խոչընդոտների՝ կապված երկրի դեպի ծով ելք չունենալու, սահմանափակ տարանցիկ երթուղիների և խոշոր շուկաներից հեռու գտնվելու հետ:

Հետևաբար պտուղ-բանջարեղենի արտադրությունը չպետք է ձգտի մրցակցել միայն ծախսով: Երկարաժամկետ նպատակը պետք է լինի այնպիսի արտահանվող արդյունաբերության կառուցումը, որը շեշտը կդնի բարձր որակի, բարձր արժեքի և արտադրանքի տարատեսակավորման վրա՝ վերացնելով միայն գնով պայմանավորված մրցակցության անհրաժեշտությունը: Սա կպահանջի ոչ միայն տեխնոլոգիաների և նյութատեխնիկական ներդրումներ, այլև պետական-մասնավոր գործընկերություն, կլաստերների (պարսերի) զարգացում և մարդկային կապիտալ, որն անհրաժեշտ է գիտելիքի վրա հիմնված տնտեսության զարգացման համար:

Պտուղ-բանջարեղենի արտահանման շուկաներում ներկայությունն ապահոված զարգացող երկրների փորձից ելնելով՝ առաջարկվում են հետևյալ գործողությունները.

- **Արդյունաբերական պարսի (կլաստերի) հիմնում:** Պետք է աշխատել մասնավոր հատվածի և ՓՄՁ-ների հետ մրցակցային արդյունաբերական պարսի ստեղծման ուղղությամբ: Սկսել մշտական երկխոսության հարթակ ստեղծելով՝ ներգրավելով կառավարությանը, արտադրողներին, ներդրողներին/բանկերին:
- **Մասնավոր ներդրումներ ներգրավել, հատկապես՝ ուղղակի արտասահմանյան ներդրումներ (FDI)**՝ կատարելագործելով ներդրումային միջավայրը և ներկայացնելով հարմարեցված ֆինանսական գործիքակազմ: Մատակարարման շղթաների խորհրդատվության համար համապարփակ ֆինանսական մեխանիզմներ զարգացնելու նպատակով կիրառել «խարսխող» ներդրողների փորձը՝ համագործակցելով առևտրային բանկերի հետ: Կան տարբեր մատչելի և փորձարկված մոդելներ՝ հավաքման կետեր կամ խորհրդատվություն պայմանագրային մատակարարների համար, եռակողմ ֆինանսական մեխանիզմներ ներդրումների համար և ռիսկերը կիսելու մեխանիզմներ, որոնք ֆինանսների և տեխնոլոգիաների միջոցով նպաստում են մրցունակ մատակարարման շղթաներին:
- **Մատակարարման հենքի գիտելիքների և կարողությունների խորացում:** Մատակարարման հենքի մասին գիտելիքների ձեռքբերում, դրան արձագանքելու կարողությունների բարելավում, ֆերմերների կապի դյուրացում վերամշակողների/արտահանողների և շուկաների հետ: Հաջողված սննդի արժեշղթայի վրա ներդրումը նշանակում է «խարսխալ» ներդրողների ներգրավում, որոնք ի վիճակի և պատրաստ են ինտեգրելու

հիմնական արտադրողներին, հավաքման կետերը կամ վերամշակողներին  
և մարքեթինգով/արտահանումով զբաղվողներին:

- Պետք է բարձրացնել մատակարարման հենքի մասին գիտելիքները, բարելավել դրան արձագանքելու կարողությունները և դյուրացնել ֆերմերների կապը վերամշակողների/արտահանողների և շուկաների հետ: Ներդրումը հաջողված սննդի արժեշտի վրա խարխիս է դառնում ներդրողներին ներգրավելու համար, որոնք ի վիճակի և պատրաստ են ինտեգրելու հիմնական արտադրողներին, հավաքման կետերը/վերամշակողներին և մարքեթինգով/արտահանումով զբաղվողներին:
- **Ներդրումներ շուկայի հետազոտությունների և շուկայի վերաբերյալ՝ տեղեկատվության ձեռքբերման, ինչպես նաև Հայաստանը որպես ծագման երկիր խթանելու համար:** Սրան կարելի է հասնել նոր շուկաներ գտնելու, շուկայի հնարավորությունների գնահատման, շուկայի զարգացման ռազմավարությունների իրականացմանն օժանդակելու միջոցով: Առաջնահերթություն տալ բարձրարժեք տարատեսակավորված արտադրանքներին, այդ թվում՝ բրենդինգին, և ծագման խթանմանը միջազգային ցուցահանդեսներին մասնակցելու միջոցով: Սկսել շուկայի ուսումնասիրություն՝ մասնավոր օպերատորներին առավել արդյունավետ կերպով նպատակային շուկաներ և ապրանքներ գտնելու հարցում օգնելու համար և ստեղծել Հայաստանը որպես ծագման երկիր խթանող ապրանքների և տեխնոլոգիաների հարուստ պորտֆել:
- **Կատարելագործել ենթակառուցվածքը և նյութատեխնիկական բազան:** Թարմ հումքի հավաքման, վերամշակման և ավելացված արժեքի ստեղծման միջանկյալ օղակները թերզարգացած են: Այս օղակները կարելի է բարելավել՝ աջակցելով ՊՄԳ/PPP-ին մարքեթինգային ենթակառուցվածքներ ներդնելու խնդրում, ինչպիսիք են մրգերի և բանջարեղենի հավաքման կենտրոնները և վերամշակված մթերքների հավաքման կենտրոնները: Նման կենտրոններն արտադրողներին հնարավորություն կտան պայմանագրեր կնքելու գնորդների հետ ավելի մեծ խմբաքանակների համար, օպտիմալացնելու տնտեսական ծախսերը և ստեղծելու հավաքման հարթակ չրի համար:
- **Մրցակցության ընդլայնում:** Մենաշնորհային գործարարության մոդելները չեն կարող փոխարինել արդյունաբերության պարսի/կլաստերի զարգացմանը: Հետևաբար անհրաժեշտ է արդյունավետ մրցակցությանը զուգահեռ ապահովել շուկայական ենթակառուցվածքների զարգացում: Հաշվի առնելով Հայաստանի արտահանման տրանսպորտի և տարանցիկ փոխադրման հետ կապված նյութատեխնիկական հարցերը՝ կարևոր է նաև ապահովել բարձր արդյունավետություն ունեցող ներմուծման և արտահանման ընթացակարգեր՝ արտահանվող արտադրանքի ծախսերի և

որակի մրցունակությունը բարելավելու համար: Ներմուծման և արտահանման ընթացակարգերի ներկայիս անարդյունավետությունը նվազեցնում է Հայաստանի ներդրումային գրավչությունը և վերջնական արտադրանքի մրցունակությունը:

- **Մնդամթերքի անվտանգության միջազգային չափորոշիչների (ստանդարտների) համապատասխանության ապահովում շուկայի տարատեսակավորման (դիվերսիֆիկացման) կարողությունը մեծացնելու նպատակով:** Այս առաջարկությունը հիմնավորված է և ավելի մանրամասն մշակված սննդամթերքի անվտանգության հարցերին նվիրված հատուկ բաժնում (տե՛ս ստորև՝ 4.3-ում):
- **Հարմարեցված ֆինանսական և ապահովագրության մեխանիզմների հասանելիության կատարելագործում:** Խրախուսել բանկերի կողմից նոր, երկարաժամկետ ֆինանսական արտադրանքի ստեղծումը ջերմոցների, միրգ և բանջարեղեն (Մ&Բ) վերամշակող ընկերությունների համար: Խարսխող ներդրողների փորձը կարող է նույնպես, առևտրային բանկերի հետ համատեղ, օգտագործվել համապարփակ մատակարարման շղթաների խորհրդատվական և ֆինանսական մեխանիզմների մշակման համար:
- **Այս առաջարկություններին աջակցելը կնշանակի, որ կառավարությունը զգալիորեն ընդլայնում է իր ներկայիս նպատակը՝ մասնավոր ներդրումներին աջակցելը ինտենսիվ (ջերմոցների) պտուղ-բանջարեղենի գործում բոլոր այգեգործական ապրանքների պարս կառուցելու հեռանկարով:** Այս նպատակը՝ պտուղ-բանջարեղենի լայնածավալ արտադրության արդիականացման և առևտրայնացման գիտելիքների և կարողությունների ստեղծումը, թերևս ավելի հավակնոտ ու ավելի երկարաժամկետ է: Բացի այդ, կառավարության և մասնավոր հատվածի համագործակցության նկատառումով զգալի նախնական ներդրումներ է պահանջում մատակարարման բազան ամրապնդելու, հանրային-մասնավոր համագործակցություն հաստատելու և արդյունաբերության լայն հարթակներ զարգացնելու ուղղությամբ:

#### 4.2 Գյուղատնտեսության բնագավառի խորհրդատվությունը

Հայաստանի գյուղատնտեսության հանրային խորհրդատվության համակարգը լավ վիճակում է, ավելի լավ, քան նմանատիպ փուլում գտնվող շատ երկրներում, և ավելի շատ պահանջում է առաջադիմական բարեփոխումներ և զարգացումներ, քան լիովին նոր մոտեցում:

Խորհրդատվության համակարգի ուժեղ կողմերը հետևյալն են. աշխատանքային ծրագրերը հիմնված են ֆերմերների կարիքների վրա, խորհրդատվությունը լավ է ընդունվում ֆերմերների կողմից, ընդգրկում է Հայաստանի համայնքների մեծ

մասը և լավ արդյունքներ է ցույց տալիս: Այն նաև ձեռք է բերում իր ընդհանուր ծախսերի 20%-ը մատուցված ծառայությունների և խորհրդատվությունների վաճառքից, իսկ ծախսերի մնացած մասը ֆինանսավորում է պետությունը: Այս կախվածությունը բյուջեից նշանակում է, որ ֆինանսավորումը կրճատելու ցանկացած որոշում կարող է սահմանափակել գործողությունները և, ամենայն հավանականությամբ, հանգեցնել ծառայությունների որակի և քանակի զգալի անկման: Ներկայիս բյուջեն շատ համեստ է՝ թե՛ հարաբերական, թե՛ բացարձակ առումով:

2014 թ. 346 մլն դրամի (627000 եվրո) հատկացումը խորհրդատվական/գիտաստիճան ծառայությունների տրամադրման համար կազմում է ԳՆ-ի բյուջեի միայն 2,5%-ը: Բյուջետային աջակցության կրկնապատկումը, հետևաբար, կարող է սպասարկման որակի շատ մեծ տարբերություն առաջացնել և մեծ ազդեցություն թողնել ոլորտի արտադրանքի վրա՝ առանց այլ բյուջետային ծրագրերից զգալի ռեսուրսներ ներգրավելու: Համաշխարհային բանկի ուսումնասիրությունները վկայում են, որ ֆերմերների խորհրդատվական ծառայությունների և կիրառական հետազոտությունների համար կատարվող ներդրումները կարող են, խթանելով արտադրողականությունը, բարձր տնտեսական շահութաբերություն ապահովել, ավելի շատ, քան գյուղատնտեսության այլ պետական ծախսերը, ինչպիսիք են սուբսիդիաները:

Այս ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հետազոտությունների շահութաբերությունը և զարգացման ներդրումները տարեկան միջինը կազմում են 43%: Սա բարձր շահութաբերություն է համարվում աշխարհի բոլոր շրջաններում: Շահութաբերության մակարդակը կախված է այն հանգամանքից, թե ներդրումները որքանով են բավարարում փոքր ֆերմերների ու գյուղի կարիքները և ազդում որակի և ծախսերի վրա:

**Այս նկատառումներից ելնելով՝ հիմնական առաջարկություններն են հանրային խորհրդատվության/գիտաստիճանի ուժեղացումը՝ որպես Հայաստանի փոքր տնտեսություններին հասնելու լավագույն միջոց և կենտրոնացումը ծառայությունների մատուցման միջոցառումների բարելավման վրա:** Հանրային խորհրդատվության հիմնական դերը հանրային լավ ծառայությունների տրամադրումն է, որը շուկան չի մատակարարում, այդ թվում, մի շարք միջոցառումների հետ միասին աջակցություն փոքր ֆերմերներին (ովքեր ի վիճակի չեն խորհրդատվության դիմաց վճարել), ինչպիսիք են դաշտային ցուցադրական աշխատանքները, զանգվածային լրատվության միջոցներով ուղերձները, որոնք վճռորոշ են գյուղատնտեսության զարգացման համար, սակայն դժվար ձեռք բերվող:

Ծառայությունների որակը կարելի է բարելավել բյուջետային աջակցության ավելացման միջոցով՝ խորհրդատուների աշխատավարձերի և տրանսպորտի, շարունակական գործնական պարապմունքների և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառման շնորհիվ: Կա նաև ծախսերի արդյունավետությունը և ծախսերի շահութաբերությունը չափավոր բարելավելու

միջոց, թեև ծախսերի վերադարձման օպտիմալ թիրախը համարվում է 30%-ը: Ինչպես խորհրդատվության, այնպես էլ ծառայությունների որակը բարձր մակարդակով ինքնաձախսաձածկման ձգտելու պարագայում, ամենայն հավանականությամբ կարող է զգալիորեն նվազել:

**Հանրային խորհրդատվության շեշտադրումը չի արգելում խորհրդատվության բազմապլան մոտեցումը, որ ներառում է նաև ծառայությունների մատուցման այլ մոտեցումներ:** Գյուղատնտեսության նախարարությունը պետք է շարունակի աշխատել մի շարք ծառայություններ մատուցողների, այդ թվում ԳԱՄԿ-ների/ԳԱՀԿ-ի, տեղական ՀԿ-ների և մասնավոր հատվածի մատակարարների հետ (ինչպիսին է CARD ագրոծառայությունը)՝ կախված նրանց համեմատական ուժեղ կողմերից և մասնագիտացման ուղղություններից: CARD-ի որդեգրած ֆերմերային և անասնաբուժական ծառայությունների կենտրոնների (ՖՕԿ և ԱՕԿ) մոդելն այս առումով խոստումնալից է, թեև դրա ազդեցությունը և ծախսերի արդյունավետությունը պետք է զգուշորեն գնահատել: ՖՕԿ-ները և ԱՕԿ-ները պահանջում են նաև զգալի հանրային (դոնորների) աջակցություն և կարող են ավելի շատ պիտանի լինել և ներդրումներով ապահովել խոշոր ֆերմերներին ավելի ինտենսիվ արտադրություն ունեցող տարածքներում:

Ի վերջո, խորհրդատվական ծառայությունների դերը փոքրանում է: Հեռավոր վայրերում գտնվող փոքր ֆերմերներին ու անասնապահներին, որոնց համար ներդրումներն ու խորհրդատվությունը կարող են ավելի քիչ հասանելի լինել, հանրային խորհրդատվության ծառայությունները կարող են ավելի լավ ծառայել: Համապատասխանաբար, առաջարկվում է ՖՕԿ-ների և ԱՕԿ-ների ազդեցությունը հետազոտել՝ պարզելու համար դրանց ծառայություններից օգտվող ֆերմերների տեսակներն ու թիվը, վաճառքի տեսակը և ստացված գումարը, կենտրոնների շահութաբերությունը և այդ ծառայությունների գնահատումը ֆերմերների կողմից: Եթե հարցումները ցույց տան, որ դրանք կայուն լինելու հնարավորություն ունեն, ապա պետք է մտածել ԳԱՄԿ-ները տեղափոխել ավելի տեսանելի վայրեր և ընդլայնել ծառայությունների սպեկտրը:

### **4.3 Սննդամթերքի անվտանգություն**

2009-2013 թթ. ընթացքում սննդամթերքի անվտանգության օրենսդրությունը Եվրոպական Միության չափորոշիչներին համաձայնեցնելու ջանքերից հետո Հայաստանը վերջերս ԵՏՄ անդամակցությանը համապատասխանելու նպատակով վերահամաձայնեցրել է այս օրենսդրությունը Ռուսաստանի Դաշնության և ԱՊՀ մյուս երկրների հետ: Այս անցումը հանգեցրել է գործող «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի մեկնաբանման և կիրարկման հստակության անկման: Սերտիֆիկացման թույլ կարողությունը, ժամանակակից սննդամթերքի անվտանգության առավելությունների և ծախսերի մասին ցածր տեղեկացվածությունը, անվտանգության չափորոշիչների սահմանափակ կիրարկումը և վատ վերապատրաստումը հանգեցրել են ածանցյալ խնդիրների, որոնց հետևանքով քիչ թվով արդյունաբերական հավաստագիր է տրվել (վերջին 7 տարվա ընթացքում՝ 40-45 համապատասխանության հավաստագիր): Այս

հարցերի առաջարկվող պատասխանները բերված են ստորև: Բոլոր միջոցառումները պահանջում են Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (ՍԱՊԾ)՝ սննդամթերքի անվտանգության պետական լիազոր մարմնի ակտիվ դեկավարում:

- **Ուժեղացնել սննդամթերքի անվտանգության օրենքների և կանոնակարգերի կիրարկումը:** Հայաստանի սննդամթերքի անվտանգության մասին արդիականացված օրենքների և այլ իրավական ակտերի կիրարկման հիմքում ընկած է դրանց հստակության բացակայությունը: Վտանգի վերլուծության և հսկվող կրիտիկական կետերի համակարգի (HACCP) ընթացակարգերի իրականացման մոտեցումը պարզ չէ, ինչը նվազեցնում է արդյունաբերողների կողմից կատարվող ներդրումները: ՍԱՊԾ-ի կողմից ստուգումների և կիրարկման ցածր մակարդակը ավելի է նվազեցնում արդյունաբերողների ներդրումները սննդամթերքի անվտանգության ժամանակակից գործելակերպերի համար, հատկապես՝ ներքին շուկայի համար արտադրող փոքր ձեռնարկությունների դեպքում: ՍԱՊԾ-ի ավելի պրոակտիվ դերը կօգնի հաղթահարելու այս խոչընդոտները, այդ թվում՝ գործող օրենքների և կանոնակարգերի հստակեցմանն ուղղված միջոցառումները, ծառայության կողմից այդ փոփոխությունների շուրջ տեղեկատվական արշավը և տեսչական ու կիրարկման ուժեղ կարողությունների հզորացումը:  
Համապատասխանության պահանջներին բավարարելու համար կարող է ավելի մեծ ձկունություն ցուցաբերվել, ինչը հնարավորություն կտա փոքր ձեռնարկությունների դեպքում ավելի քիչ ներդրումներով և պակաս ծախսերով իրականացնելու ռիսկերի կառավարման ընթացակարգերը, ինչպես Եվրոպական Միությունում:
- **Ուժեղացնել ազգային խորհրդատվությունն ու հավատարմագրումը:** Բազմաթիվ ազգային խորհրդատվական ծառայությունների ցածր որակը դանդաղեցնում է սննդամթերքի անվտանգության ժամանակակից համակարգերի ընդունումը: Պարզվում է, որ Ստանդարտների ազգային ինստիտուտի (ՍԱԻ) կողմից կատարվող հավատարմագրումը համարժեք միջազգային ճանաչում չունի: Այդ իսկ պատճառով սննդամթերքի արդյունաբերության ներդրումները թույլ շահութաբերություն ունեն, ինչը նվազեցնում է արդյունաբերության կողմից սննդամթերքի անվտանգության համակարգերի արդիականացման խթանումը:
- ՍԱՊԾ-ն պետք է համակարգի այս խնդիրների լուծումները՝ սկսելով մասնավոր խորհրդատվական ծառայությունների կարողություններն ամրապնդող միջոցառումներից: Նա պետք է սկսի նաև արտաքին ԱՄԻ կողմից հավատարմագրման գնահատումը և անդրադառնա այն խնդիրներին, որոնք խոչընդոտում են դրա գործունեության միջազգային ճանաչումը:

- **Ընդլայնել և արագացնել միջազգային հավատարմագրման հասանելիությունը:** Անհրաժեշտ են միջազգային հավատարմագրման ծառայությունների բարելավված հասանելիություն և միջազգային հավատարմագրման ազգային լաբորատորիաներ: Միջազգային ճանաչում ունեցող ծառայությունները հեշտացնում են մուտքը միջազգային շուկաներ՝ սննդամթերքի արդյունաբերության ավելի առաջադեմ տարրեր և ծառայություններ մատուցող ազգային գործակալությունների և խորհրդատվական ձեռնարկությունների համար ուղենիշներ սահմանելու համար: Ներդրումներ են պահանջվում նաև սարքավորումների և ուսուցման համար ազգային լաբորատորիաների միջազգային հավատարմագրումը հեշտացնելու նպատակով: Սննդամթերքի անվտանգության օրենքների և կանոնակարգերի համապատասխանությունը խրախուսող և կիրարկող լայնածավալ միջոցառումները կնպաստեն միջազգային հավատարմագրման ծառայությունների պահանջարկի ներկայիս ցածր մակարդակի բարձրացմանը:
- **Բարձրացնել արդյունաբերողների իրազեկությունը ժամանակակից սննդամթերքի անվտանգության ծախսերի և պարտավորությունների վերաբերյալ:** Ձեռնարկությունները սննդամթերքի անվտանգության ժամանակակից համակարգերի ծախսերն ու օգուտները թերի են հասկանում: Ծախսերի տեսանկյունից արտադրողները, որպես համապատասխանության հիմք հաճախ համարում են շինությունների և սարքավորումների համար ներդրումները, այլ ոչ՝ բարելավված ռիսկերի կառավարման: Նրանք հաճախ անտեղյակ են, որ ծախսերի համապատասխանությունը ներառում է խորհրդատվական ծառայությունների և հավատարմագրման վճարներ: Ավելի շատ ջանքեր են նաև անհրաժեշտ, որպեսզի ոլորտում խորանա ըմբռնումն առ այն որ ժամանակակից սննդամթերքի անվտանգության համակարգերի ընդունումը պարտավորություն է, ոչ թե ընտրություն: Արդյունաբերության ուշադրության կենտրոնում պետք է լինեն այն հարցերը, թե ինչպես և երբ համապատասխանեցնել, ինչպես այդ փոփոխությունները կատարել ծախսարդյունավետ կերպով, ոչ թե ինչպես համապատասխանեցումից խուսափել կամ ուշացնել: ՄԱՊԾ-ի գլխավորությամբ հանրային իրազեկման արշավը կնպաստի տեղեկատվական այդ բացը լրացնելուն: Պետք է ներգրավված լինեն ոլորտի՝ արդեն համապատասխանություն ձեռք բերած լիդերները, ինչպես նաև հեղինակավոր խորհրդատվական և հավատարմագրման ծառայությունները:
- **Ստեղծել միջին մասնագիտական կամ համալսարանական դիպլոմի ծրագիր սննդամթերքի անվտանգության մասնագետներ պատրաստելու համար:** Մինչ օրս սննդամթերքի անվտանգության մասնագետների վերապատրաստման մեծ մասը ապահովվել է ժամանակավոր դոնորների աջակցությամբ իրականացվող ծրագրերով, որոնք կապված են եղել ԵՄ



իրավական և ինստիտուցիոնալ բարեփոխումների ընդունման հետ: Սակայն դրանք արդեն ավարտվել են: Այժմ ի հայտ է եկել սննդամթերք արտադրող ձեռնարկությունների նոր սերունդ, որոնց համար վերապատրաստման դասընթացները հասանելի չեն, սակայն նրանք պետք է պատկերացում կազմեն ԵՏՄ սննդամթերքի անվտանգության միանգամայն տարբեր համակարգին համապատասխանության պահանջների մասին: Սննդամթերքի անվտանգության տեսուչները, լաբորանտները և խորհրդատվական ու հավատարմագրման ծառայությունները ևս պետք է համապարփակ պատկերացում ունենան սննդամթերքի անվտանգության ԵՏՄ և միջազգային համակարգերի մասին: Հետագայում այս դասընթացը պետք է հասանելի լինի մշտական հիմունքներով, ոչ թե հիմնվի ժամանակավոր դոնորների աջակցության վրա: Ուստի միջին մասնագիտական կամ համալսարանական դիպլոմի ծրագիր է անհրաժեշտ հանրային և մասնավոր սննդամթերք արտադրողներին պատրաստված մասնագետներով ապահովելու համար: Կարող է նաև ավելի ծախսարդյունավետ՝ տարածաշրջանային հիմունքներով ծրագիր մշակելու հնարավորություն լինել:

#### 4.4 Գյուղատնտեսական հողերի շուկաները

Գյուղատնտեսական հողերի շուկաները Հայաստանում թույլ են, չնայած վերջին իրողությունները փաստում են, որ դրանք ընդլայնվում են: Մոտավորապես 10,000 հա վաճառվել է 2015 թ., որը կազմում է ընդհանուր գյուղատնտեսական հողերի 0.5%-ը: Շուրջ 270,000 հա վարձակալության է տրվել համայնքապետարանների կողմից: Մասնավոր հողերի վարձակալության տվյալներ չկան, բայց հավանական է, որ դրանք համայնքապետարանների կողմից վարձակալության տրվածից ավելի լինեն: Գյուղատնտեսական հողերն ուժեղացնելու համար կարող են մի շարք միջոցներ կիրառվել, որոնք բերված են ստորև:

- **Հողերի միավորման ծրագրի իրականացում:** Անհրաժեշտ է հողերի միավորման համազգային ծրագիր՝ հողօգտագործման արդյունավետությունը բարելավելու և հողերի շուկայի զարգացումը դյուրացնելու համար: Կառավարությունը պետք է այս ծրագրի իրականացման համար պահանջվող համարժեք իրավական դաշտն ապահովելու նպատակով ղեկավարումը լիազորի որևէ հաստատության:
- **Կադաստրային տվյալների բարելավում:** Կադաստրային տվյալների անճշտությունները հանգեցնում են համընկնումների, որոնք խանգարում են հողերի վաճառքին: Անհրաժեշտ է իրականացնել պետական և համայնքային հողերի, անտառների և ջրածածկ տարածքների համակարգված գրանցում, որպեսզի լուծվի համընկնման խնդիրը նոր հետազոտության շրջանակում: Քանի որ կադաստրային քարտեզները չեն համապատասխանում իրականությանը, կառավարությունը պետք է նախաձեռնի առկա կադաստրային քարտեզների զանգվածային

գնահատում և հողակտորների համակարգված վերահետազոտում կամ կադաստրային թվային քարտեզների թարմացում և կամ առկա քարտեզների փոփոխում:

- **Առավել արդյունավետ հողերի մոնիթորինգի համակարգի մշակում:** Կառավարությունը պետք է մտածի ինտեգրված, վերլուծական-տեղեկատվական համակարգի ներդրման մասին՝ հողերի օգտագործումը մոնիթորինգի ենթարկելու համար, ինչպես, օրինակ՝ հողակտորների նույնականացման համակարգը (LPIS) կամ ֆերմերների ռեեստրը:
- **Համայնքային հողերի վարձակալության և օտարման արդյունավետության բարելավում:** Պետական և համայնքային հողերի արդյունավետ օտարումը հեշտացնելու նպատակով կառավարությունը պետք է իրականացնի պետական հողերի համակարգված վերագրանցում և թարմացնի կադաստրային գնահատման քարտեզները: Սա կնպաստի օտարման գործընթացի կարգավորմանը, ավելի շատ եկամուտներ ապահովելուն այն համայնքների համար, որտեղ հողերը վաճառվել են շուկայական արժեքից ցածր գներով, և վաճառքն ավելացնելուն այնտեղ, որտեղ օտարմանը խանգարում են բարձր գները: Միաժամանակ ուղեցույցներ մշակելու և համայնքապետարանների/քաղաքապետարանների համար ուսուցում իրականացնելու անհրաժեշտություն կա, որպեսզի բարձրանա նրանց՝ հողօգտագործման պլանավորման, հողերի օտարման և հողերի վարձակալության կարողությունները: Տեղական իշխանությունները ևս պետք է ապահովեն հողերի օտարման մասին տեղեկատվության հասանելիությունը ՋԼՄ-ների և իրազեկման ծրագրերի միջոցով:
- **Ուժեղացնել լքված հողերի քաղաքականությունը:** Նախ պետք է նույնականացնել բոլոր լքված հողերը: Կլինեն դեպքեր, երբ լքված հողը գրանցված է, սակայն սեփականատերը հայտնի չէ, և դեպքեր, երբ հողի սեփականատերը ո՛չ հայտնի է, ո՛չ էլ գրանցված: Սեփականատիրոջ բացակայության հարցը նույնպես կարող է կարևոր դեր խաղալ, քանի որ որոշ սկզբնական սեփականատերեր կարող են մահացած լինել կամ հողակտորը մեկ ուրիշին փոխանցած: Քաղաքականությունը պետք է սոցիալապես ընդունելի լինի և հիմնավորված համապատասխան օրենսդրությամբ:
- **Բարելավել պետական և համայնքային հողերի սահմանագծումը:** Անհամապատասխան սահմանագծումը հանգեցրել է նույն հողակտորի վաճառքի կամ վարձակալության հարևան համայնքների կողմից: Այս հարցը պետք է լուծեն տեղական ինքնակառավարման մարմինները, հատկապես այն դեպքերում, երբ համայնքները միավորվում են կամ ընդլայնվում:

- **Աջակցել գյուղական վայրերում անշարժ գույքի գործակալությունների զարգացմանը:** Անշարժ գույքի գործակալությունները զարգացած են քաղաքային շրջաններում, որոնք իրենց կայքերում զետեղում են ունեցվածքի տարածքների և գների վերաբերյալ տեղեկատվություն և լուսանկարներ: Համարժեք գյուղատնտեսական հողերի վերաբերյալ տեղեկատվությունը չափազանց սահմանափակ է կամ բացակայում է: Ավելին, այդ տեղեկությունները ցրված են համայնքապետարաններում և քաղաքապետարաններում, ինչը խոչընդոտում է գյուղատնտեսական հողերի շուկաների ձևավորումն ու ֆերմաների ընդլայնումը: Գյուղական վայրերում անշարժ գույքի գործակալությունների զարգացմանն ուղղված աջակցությունը կնպաստի այս խոչընդոտի վերացմանը և գյուղական հողերի ինստիտուցիոնալ բազայի ամրապնդմանը:
- **Իրականացնել հողերի կառավարման գնահատման շրջանակը (LGAF):** Հողերի կառավարման գնահատման շրջանակն (LGAF) առաջարկվում է հողերի կառավարման կարգավիճակը գնահատելու համար: LGAF-ը Համաշխարհային բանկի կողմից նախագծված գործիք է, որն օգնում է երկրներին գնահատելու հողերի կառավարման իրենց քաղաքականությունն ու պրակտիկան և չափորոշիչներ է ապահովում համեմատության և մոնիթորինգի առաջընթացի համար: Այն իրականացվել է ավելի քան 40 երկրներում, այդ թվում՝ Մոլդովայում, Վրաստանում, Ուկրաինայում և Խորվաթիայում:

#### 4.5 Գյուղատնտեսության ապահովագրումը և ռիսկերի կառավարումը

Բարձրարժեք մրգեր և բանջարեղեն արտադրողներից շատերը, որոնք ապահովում են գյուղատնտեսական մթերքի արտահանման բազան, չափազանց խոցելի են կլիմայական ռիսկերի նկատմամբ, ինչը ապակայունացնում է նրանց եկամուտները և նվազեցնում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը: Հայաստանի կառավարությունը նախատեսում է ստեղծել գյուղատնտեսության ապահովագրման ծրագիր՝ որպես արտադրական ռիսկերը նվազեցնող միջոց: Հայաստանի կենտրոնական բանկը (ԿԲ), որպես գյուղատնտեսության ապահովագրության նպատակին հասնելու առաջին քայլ, սկսել է առաջարկ մշակել այն շարունակելու ուղղությամբ: Կառավարությանը առաջարկություն ներկայացնելու նպատակով գյուղատնտեսության ապահովագրության ծրագրեր են ուսումնասիրվել հետևյալ երկրներում. ԵԿԱ տարածաշրջան, Ալբանիա, Բելառուս, Բոսնիա և Հերցեգովինա, Վրաստան, Մոլդովա, Սերբիա, Մակեդոնիա, Մոնտենեգրո, Ռուսաստան և Ուկրաինա:

Տեխնիկական հայտագրում քննարկվում են նաև ԵՄ երկրներում, ԱՄՆ-ում և Կանադայում ապահովագրական ծրագրերի ծախսերը և իրականացման գործողությունները, որոնք միջոց կլինեն Հայաստանի կառավարությանն ուղղորդելու գործում: Մակայն հարկ է նշել՝ միջազգային փորձը ցույց է տալիս, որ ապահովագրումը լուծում չէ արտադրական ցնցումների դեպքում: Սկզբնական

տարիներին քիչ հավանական է, որ ծածկույթը գերազանցի գյուղատնտեսական արտադրանքի արժեքի 10%-ը, և քիչ հավանական է, որ հետագա տարիներին գերազանցի արտադրանքի արժեքի 50%-ը, նույնիսկ ուժեղ աջակցության և կառավարության բարձր մակարդակի սուբսիդավորման պարագայում:

Բացի ապահովագրումից, պետք է ակտիվորեն օժանդակել նաև ռիսկերի կառավարման այլ ձևերին, մասնավորապես՝ մշակաբույսերի և կենդանիների կառավարման կանխատեսված ռիսկերը մեղմացնող միջոցներին (օրինակ՝ հակակարկտային ցանցեր, հակասառնամանիքային հրացաններ, ոռոգման, կենդանիների կերակրման ռեզերվներ, կենդանիների պատվաստման ծրագրեր): Նվազեցնելով հիմքում ընկած արտադրական տատանումները՝ այդ ռիսկերի նվազեցման ռազմավարությունները կարող են բարելավել արտահանման շուկաների մատակարարումն ապահովող ունակությունը և նվազեցնել արտահանման օգուտների կորուստները: Ապահովագրումը փոխհատուցում է միայն արտադրողների եկամուտների կորուստը:

Այդ երկրներում գյուղատնտեսության ապահովագրության առավել հաճախ նկատվող ձևը բազմակի և անվանական ռիսկերի ապահովագրումն է (MPCI և NMPI): Տարածքի եկամտաբերության ցուցանիշով ապահովագրումը փորձարկվել է Ալբանիայում, Սերբիայում և Մակեդոնիայում: Այն փորձարկվել է նաև Ուկրաինայում, սակայն ֆերմերները նախընտրել են MPCI արտադրանքը, քանի որ այն ավելի մեծ ծածկույթ ունի: Տարածաշրջանում եղանակի ցուցանիշով ապահովագրման որևէ դրական փորձ չկա: Մասնավոր ապահովագրողները շատ դեպքերում գյուղատնտեսության ապահովագրություն կատարում են կառավարության 50% արտոնյալ/պրեմիում սուբսիդավորման դեպքում: Մի քանի երկրներ սահմանել են առավելագույն պրեմիում սուբսիդավորման շեմը մեկ ֆերմայի հաշվով: Ապահովագրման ծածկույթը մշակաբույսերի դեպքում կազմում է ցանքատարածքի կամ ֆերմերների ընդհանուր թվի 5-7%-ը: Անասնապահության ապահովագրական ծրագրերը նույնիսկ ավելի ցածր տոկոս են կազմում:

Այս ցածր մակարդակով ծածկույթը բացատրվում է կայուն տեղեկատվական և ֆերմերների իրազեկման արշավների անբավարար օգտագործմամբ, ժամանակավոր արտակարգ իրավիճակների օգնության ծրագրերի առկայությամբ, ֆերմերների ապահովագրման, կոռուպցիայի և գյուղատնտեսական ռիսկերի թույլ կարողություններով: Որոշ երկրներում խնդիր է նաև վերաապահովագրման մատչելիությունը, մանավանդ եթե գյուղատնտեսական ապահովագրության պորտֆելը շատ փոքր է: Վեճերի արդյունավետ լուծման մեխանիզմի բացակայությունը նույնպես խոչընդոտ է դիտվում գյուղատնտեսական ապահովագրության լայն օգտագործման համար:

Այդ երկրների փորձը ցույց է տալիս, որ ծրագրի հաջող ներդրման հիմնական նախապայմանը պրոակտիվ կառավարությունն է: Հանրային-մասնավոր գործընկերությունը, թերևս, լավագույն հարթակն է Հայաստանում գյուղատնտեսության ապահովագրության ստեղծման համար, սակայն

կառավարությունը պետք է ուժեղ դեկավարում ստանձնի, իսկ բոլոր գործընկերները, ներառյալ ֆերմերները՝ պրոակտիվ մասնակցություն: Կայուն (2-3 տարի) տեղեկատվական և կրթական ծրագիր է պահանջվում ֆերմերների իրազեկությունը բարձրացնելու համար, իսկ կառավարությունը պետք է ակտիվորեն աշխատի ֆերմերների վստահությունը շահելու ուղղությամբ: Ֆերմերներին հատկացվող աղետների վնասների փոխհատուցման ընթացիկ ժամանակավոր ծրագիրը պետք է դադարեցնել կամ փոփոխել՝ ապահովելով, որ ֆերմերներին հասանելի չլինեն և ապահովագրումը, և աղետների համար հատկացվող օգնությունը: Բացի ծրագիրը դեկավարելուց, կառավարությունը պետք է նաև անհրաժեշտ օրենսդրության ընդունման, համապատասխան վիճակագրության տրամադրման և վեճերի լուծման արդյունավետ մեխանիզմի ստեղծման պատասխանատվություն ստանձնի: Թե՛ կառավարությունը և թե՛ ապահովագրողները պետք է նաև առաջին տարիների ընթացքում սխալներին և վնասներին առնչվող դրույթներ նախատեսեն, քանի որ ծրագրի զարգացումը անխուսափելիորեն դասեր քաղելու գործընթաց է:

Գյուղատնտեսության ապահովագրության վերանայումը տարբերվում է ԿԲ-ի ուսումնասիրության առաջարկություններից, քանի որ MCPI և NMPI արտադրանքը համարում է Հայաստանի համար առավել հարմար: Այն առաջարկում է նաև հետազայում նկատի ունենալ խմբակային տարածքի եկամտաբերության ապահովագրում: Եղանակի ցուցանիշով ապահովագրումը ներկայումս կենսունակ տարբերակ չի դիտվում Հայաստանի համար: ԿԲ-ի ապահովագրության ուսումնասիրության՝ վարկային ծրագրերի հետ կապելու առաջարկությունը նույնպես հարցականի տակ է: Այլոց փորձը ցույց է տալիս, որ ֆինանսական հաստատությունները ապահովագրությունը չեն դիտում որպես գրավի օրինական ձև և չեն կրճատում ապահովագրական վարկեր ունեցող ֆերմերների վարկավորման տոկոսադրույթները: Ապահովագրության տարածումը և վաճառքը հեշտացնելու նպատակով ֆինանսական հաստատությունների օգտագործումը ակնհայտ հաջողությունների չի հանգեցրել, իսկ վարկով ապահովագրված բերքի հաշվարկը դժվար է եղել:

Այլ հիմնական նախապայմանների թվում են.

- **Համապատասխան իրավական դաշտի ստեղծում:** Մա շատ կարևոր է, բայց հաճախ՝ դժվար, և կարող է կառավարությունից ամուր կամքի դրսևորում պահանջել: ԱՊՀ երկրներում այդ կարևոր պահանջին հաճախ խանգարում է հին ոճի բյուրոկրատիան:
- **Համապատասխան վիճակագրական տեղեկատվության տրամադրման ապահովում:** Իդեալական վիճակում վիճակագրական տվյալները պետք է հասանելի լինեն 20 և ավելի տարիներ շարունակ յուրաքանչյուր մշակաբույսի և յուրաքանչյուր վարչական միավորի (շրջան, մարզ, համայնք և այլն) համար: Ֆերմայի մակարդակով բերքատվության վերաբերյալ պատմական տվյալները նույնպես ցանկալի են: Հետագա պատմական տվյալները եղանակային և ռիսկային իրադարձությունների

վերաբերյալ պահանջվում են MPCİ արտոնյալ դրույքաչափերի հաշվարկման և անվանական ռիսկերի ծրագրերի համար: Վիճակագրական տվյալների բացակայության դեպքում հնարավոր է օգտագործել մշակաբույսերի բերքատվության մոտավոր թվեր և փորձագիտական կարծիք, սակայն դա նվազ վստահելի է, ուստի նման տվյալները պետք է զգուշությամբ կիրառվեն:

- **Գյուղատնտեսական ապահովագրության կարողությունների ստեղծում:** Ուսումնասիրված երկրներից շատերը գյուղատնտեսական ապահովագրության մեծ փորձ ունեցող ապահովագրական ընկերություններ չունեն: Այլ երկրներում ապահովագրության ոլորտը փոքր է, իսկ մասնավոր ապահովագրական ընկերությունները սահմանափակ կարողություն ունեն գյուղատնտեսական ռիսկերն ապահովագրելու գործում: Այս իրավիճակում կառավարությունը պետք է առաջնորդի մասնավոր ապահովագրողներին ցուցաբերվող աջակցությունը և ապահովի, որ նրանք ժամանակ և ռեսուրսներ ունենան գյուղատնտեսական ռիսկերն իրենց վրա վերցնելու կարողություններ ձեռք բերելու համար: Կամ հենց ապահովագրական ընկերությունները կարող են մի գյուղատնտեսական ապահովագրական ընկերություն ստեղծել, որը կգրադվի գյուղատնտեսական ռիսկերով (Hagelversicherung Ավստրիայում): Այն դեպքում, երբ ապահովագրական ոլորտը ոչ մի հետաքրքրություն չի ցուցաբերում գյուղատնտեսության նկատմամբ, կառավարությունը կարող է կամ պետական մասնագիտացված ապահովագրական ընկերություն հիմնել (Crown կորպորացիան Կանադայում)՝ ապահովագրական և ադետների հիմնադրամ (Կանատը Իսրայելում), կամ աջակցել ապահովագրական բյուրոյի կայացմանը (Agroseguro-ն Իսպանիայում, TARSIM-ը Թուրքիայում): Խորհուրդ է տրվում նաև բոլոր ապահովագրողների խիստ կարգավորում սուբսիդիաների չարաշահումներից զերծ մնալու և հաճախորդների վստահությունը պահպանելու համար:
- **Ապահովել համարժեք ապահովագրման և կորստի փոխհատուցման կարողություններ և ակտուարական ծառայությունների հասանելություն:** Մրանք ավելի հեշտ լուծվող խնդիրներ են, որոնք կարող են կարճ ժամանակահատվածում հաղթահարվել: Ապահովագրման և կորստի ճշգրտման գիտելիքներ կարելի է ձեռք բերել վերաապահովագրողների կամ այլ երկրների ապահովագրողների հետ անմիջական շփումների միջոցով: Փորձը ցույց է տալիս, որ ցանկացած երկիր կարող է չափավոր ծախսերով 2-3 տարվա ընթացքում ձեռք բերել անհրաժեշտ ծավալի մասնագիտական գիտելիքներ և հմտություններ: Հիմնական դրույքաչափերի հաշվարկման մեթոդները հանրությանը մատչելի են, իսկ ավելի բարդ մեթոդաբանություններ կարելի է ձեռք բերել ողջամիտ գներով: Որոշակի ճշգրտումներ կարող են պահանջվել, սակայն դա կարելի է անել այլ երկրներից ակտուարական ծառայություններ պատվիրելու միջոցով:

- **Վերաապահովագրման դյուրացումը:** Որակյալ վերաապահովագրման հիմնական խոչընդոտը փոքրածավալ ապահովագրական պորտֆելն է և ապահովագրական ընկերությունների ցածր մակարդակով տեխնիկական գիտելիքների շրջանակները: Խոշոր վերաապահովագրողները սովորաբար չեն հետաքրքրվում տարեկան 500 հազար դոլար/եվրո պրեմիումից պակաս վերաապահովագրման ծրագրերով: Մակայն այդ վերաապահովագրողները կարող են իջեցնել իրենց որակավորման պահանջները, եթե հաճախորդը/երկիրը կարող է ապացուցել, որ ծրագիրն ապագա աճի ներուժ ունի:

Եթե այս պայմանները ապահովվում են, ապա հնարավոր է, որ ապահովագրումը ծածկի մշակաբույսերի ցանքատարածքների 10%-ը ծրագրի մեկնարկից 2-3 տարվա ընթացքում, իսկ 3-4 տարի հետո՝ 20-30%-ը: 10 տարվա ընթացքում ներթափանցման մակարդակը կարող է հասնել մինչև 50%-ի: 7-10 տարվա իրատեսական ժամանակահատված է անհրաժեշտ գյուղատնտեսական ապահովագրության ծրագրի ստեղծման համար, ընդ որում՝ 3-5 տարվա փորձնական ծրագրով: Ապահովագրման վերին սահմանի այս ներուժը ցույց է տալիս, որ ապահովագրումը սպեղանի չէ գյուղատնտեսական ռիսկերի կառավարման համար: Նույնիսկ ամենալավատեսական սցենարով՝ մշակաբույսերի արտադրության կեսն անգամ չի կարող ապահովագրվել: Հետևաբար կառավարությունը պետք է սատարի նաև ռիսկերի կառավարման այլընտրանքային ձևերին, այդ թվում՝ կանխատեսված կարկտահարությունից, ցրտահարությունից և երաշտից ֆերմաների մակարդակով վաղօրոք պաշտպանվելու միջոցներին (օրինակ՝ հակակարկտային ցանցեր, ցրտահարության հրացաններ, ոռոգում): Այս կանխատեսված ռիսկերի կառավարման ռազմավարությունները պաշտպանում են նաև բերքի կորստի, ներքին շուկաների ապակայունացման և արտահանումից ստացված գումարների կորստի դեպքում, մինչդեռ ապահովագրությունը ծածկում է միայն եկամուտների կորուստը:

#### 4.6 Հանրային ծախսերը

- 4.7 **Գյուղատնտեսության ոլորտի համախառն հանրային ծախսերը<sup>5</sup> իրականում աճել են 2011 թ. ի վեր, չնայած մնացել են չափավոր՝ 2014 թ. կազմելով ընդհանուր հանրային ծախսերի 4.5%-ը: Դա պայմանավորված է ընթացիկ ծախսերի աճով, մեծ մասամբ՝ շնորհիվ գյուղատնտեսության համար ուղղակի բյուջետային աճող աջակցության (հիմնականում սուբսիդիաների):**

Ի հակադրություն էական հանրային ծառայությունների, ընթացիկ ծախսերը քիչ են աճել՝ չնայած գյուղատնտեսական ՀՆԱ-ի իրական արժեքի 26% աճի: Էական

<sup>5</sup> ԳՆ-ի և ՋՏՊԿ-ի համատեղ ծախսեր:

հանրային ծառայությունների հաշվին ուղղակի բյուջետային աջակցության շեշտադրումը մտահոգիչ է: Ոլորտի արդիականացման և առևտրայնացման համար առանցքային են գյուղատնտեսական գիտաստիճան/խորհրդատվության հանրային հատվածի ուժեղ կարողությունները, սննդամթերքի անվտանգությունը, սահմանային վերահսկողությունը և մշակաբույսերի ու կենդանիների հիվանդությունների վերահսկողությունը: Հանրային ներդրումները նույնպես նվազել են 2010 թ. ի վեր, թեև կապիտալ ծախսերի մեծ մասն ուղղվում է ոռոգման, ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրերին: Ներկայումս ներդրումային ծախսերի միայն 1%-ն է հատկացվել գյուղատնտեսության հանրային ծառայությունների մատուցման համար:

**Ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերը վերահաշվեկշռելու ամուր հիմքեր գոյություն ունեն և համարժեք շրջանակ, որպեսզի ուժեղ աջակցություն ապահովվի գյուղատնտեսության արդիականացման և առևտրայնացման համար:** Վառելիքի սուբսիդավորման, ընթացիկ խոշոր սուբսիդավորման ծրագրի շարունակական ծախսերը տարակուսելի են, եթե հաշվի առնվեն անհամաչափ աջակցությունը խոշոր ֆերմերներին և չարաշահման ներուժը: Այլ սուբսիդավորման ծրագրերը, օրինակ՝ տոհմային անասունների բուժման ծրագիրն իր չափերով փոքր է, իսկ շարունակելիության տեսանկյունից անբավարար՝ արդյունավետ լինելու համար: Ֆերմերներին տրվող հետագա բյուջետային աջակցությունը պետք է ուղղել մի շարք նեղ միջոցառումների՝ աջակցելու մասնավոր ներդրումներին և գյուղներդրումների մատակարարմանը, և պետք է արգելել հանրային միջոցներից խոշոր ֆերմերներին տրվող անհամաչափ բաշխումը: Այս նեղ ուղղությունը կնպաստի ընթացիկ ծախսերի վերաբաշխմանը էական հանրային ծառայություններին աջակցելու համար: Դոնորները և կառավարությունը նույնպես պետք է մեծացնեն հանրային ներդրումները հանրային և մասնավոր հաստատություններն ամրապնդող միջոցառումների և ժամանակակից արտադրության, վերամշակման և մարքեթինգի համակարգերի համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների կառուցման համար:

Սրանց մեծ մասը բյուջեից անկախ առաջարկություններ են, որոնք համահունչ են ազգային ռազմավարական փաստաթղթերին: Ֆերմերային ներդրումների սուբսիդիաները բարելավում են չեզոք միջոցների հասանելիության ծավալը, ինչը օգտակար է ինչպես մեծ, այնպես էլ փոքր ֆերմերների համար, իսկ այս սուբսիդավորման շեմը կսահմանափակի խոշոր ֆերմերներին տրվող անհամաչափ նպաստները: Էական հանրային ծառայությունների աջակցության բարձրացումը կնպաստի նաև փոքր ֆերմերներին, հատկապես՝ գյուղատնտեսական գիտաստիճան/խորհրդատվության համակարգն ամրապնդող միջոցառումները, կնպաստեն նաև լուրջ դոնորային ներդրումները հանրային և մասնավոր հաստատությունների և մարդկային կապիտալի համար:

## V. ՀԱՄԱՌՈՏ ՄԱՏՐԻՑԱՆ



Ստորև բերված մատրիցան ներկայացնում է վերանայման ընդհանուր տեսակետը  
և տարբերակներ բերում քաղաքականության և ներդրումների համար:

| Նպատակը   | Առաջարկվող քաղաքականության միջոցառումները   | Ժամանակահատվածը և գերակայության մակարդակը | Գիտելիքների պակասը  |
|---|---|---|---|
| <b>I. Պտուղ-բանջարեղենի արտահանումը</b>                           |   |   |   |
| <b>Արդյունաբերական պարսի ստեղծման հեշտացում</b>                   | Պետք է աշխատել մասնավոր հատվածի և ՓՄՁ-ների հետ մրցակցային արդյունաբերական պարսի ստեղծման ուղղությամբ: Սկսել մշտական երկխոսության հարթակ ստեղծելուց ներգրավելով կառավարությանը, արտադրողներին, ներդրողներին/բանկերին:  | Երկարաժամկետ, ուժեղացող, բարձր            | Պարսի զարգացման գլոբալ փորձը, ուսումնական ուղևորություններ  |
| <b>Մասնավոր ինվեստորների ներգրավում, հատկապես՝ ԱՌԻՆ/ FDI</b>      | Կատարելագործել ներդրումային միջավայրը և ներկայացնել հարմարեցված ֆինանսական գործիքակազմ: Մատակարարման շղթաների խորհրդատվության համար համապարփակ ֆինանսական մեխանիզմներ զարգացնելու նպատակով օգտագործել «խարսխող» ներդրողների փորձը՝ համագործակցելով առևտրային բանկերի հետ: Կան տարբեր մատչելի և փորձարկված մոդելներ՝ հավաքման կետեր կամ խորհրդատվություն պայմանագրային մատակարարների համար, եռակողմ ֆինանսական մեխանիզմներ ներդրումների համար և ռիսկերը կիսելու մեխանիզմներ, որոնք ֆինանսների և տեխնոլոգիաների միջոցով նպաստում են մրցունակ մատակարարման շղթաներին: Մա պետք է կատարվի կատարելագործված քաղաքականության և ինստիտուցիոնալ շրջանակների հետ զուգահեռաբար: | Կարճաժամկետ, բարձր                        | Հարմարեցված ֆինանսական մեխանիզմների իրագործելիության ուսումնասիրություն   |
| <b>Մատակարարման հենքի գիտելիքների և կարողությունների խորացում</b> | Մատակարարման հենքի մասին գիտելիքների ձեռքբերում, դրան արձագանքելու կարողությունների բարելավում, վերամշակողների կամ արտահանողների և շուկաների հետ ֆերմերների կապի դյուրացում: Հաջողված սննդի արժեչաթայի վրա ներդրումը նշանակում է «խարսխող» ներդրողների ներգրավում, որոնք ի վիճակի և պատրաստ են ինտեգրելու հիմնական արտադրողներին, հավաքման կետերը կամ վերամշակողներին և մարքեթինգով/արտահանումով զբաղվողներին: Դրան հասնելը ենթադրում է. (i) երկրում պտուղ-բանջարեղենի ագրոէկոլոգիական ներուժի քարտեզագրում և գիտելիքների ամրապնդում, (ii) ինստիտուցիոնալ կապերի ամրապնդում (հետազոտություն և   | Կարճից մինչև միջնաժամկետ, բարձր           | Թարմացված և խորը գիտելիքներ, ագրոէկոլոգիական կարողություններ՝ ըստ տարածաշրջանի/գոտու և ագրարային կառուցվածքը, պտուղ-բանջարեղենի |

|   |  |                       |   |
|---|--|-----------------------|---|
|   | գարգացում, ֆինանսական հաստատություններ):   |                       | մշակաբույսերի բերքատվությունը և արտադրողականությունը                      |
| <b>Ներդրումներ շուկայի հետազոտությունների և շուկայի վերաբերյալ տեղեկատվության ձեռքբերման, ինչպես նաև Հայաստանը որպես ծագման երկիր խթանելու նպատակով</b> | Սրան կարելի է հասնել նոր շուկաներ գտնելու, շուկայի հնարավորությունների գնահատման, շուկայի զարգացման ռազմավարությունների իրականացմանը օժանդակելու միջոցով: Առաջնահերթություն տալ բարձրարժեք տարատեսակավորված արտադրանքներին, այդ թվում՝ բրենդինգին և ծագման խթանմանը, միջազգային ցուցահանդեսներին մասնակցելուն, օրինակ՝ Մոսկվայի ProDEXPO-ին, ինչպես նաև ուսումնական այցեր կազմակերպելուն: Սկսել շուկայի ուսումնասիրություն, օգնելու մասնավոր օպերատորներին նպատակային շուկաներ և ապրանքներ գտնել առավել արդյունավետ կերպով և հիմնել Հայաստանը որպես ծագման երկիր խթանող ապրանքների և տեխնոլոգիաների հզոր պորտֆել:  | Երկարաժամկետ, չափավոր | Շուկայական հետազոտություններ, համեմատական և մրցունակության վերլուծություն |
| <b>Կատարելագործել ենթակառուցվածքը և նյութատեխնիկական բազան</b>  | Թարմ հումքի հավաքման, վերամշակման և ավելացված արժեքի ստեղծման միջանկյալ օղակները թերզարգացած են: Այս օղակները կարող են բարելավվել՝ աջակցելով ՊՄԳ-ին, որպեսզի ներդրումներ կատարեն մարքեթինգային ենթակառուցվածքների համար, ինչպիսիք են մրգերի և բանջարեղենի հավաքման կենտրոնները և վերամշակված մթերքների հավաքման կենտրոնները: Նման կենտրոնները արտադրողներին հնարավորություն կտան պայմանագրեր կնքելու գնորդների հետ ավելի մեծ խմբաքանակների համար, օպտիմալացնելու տնտեսական ծախսերը և ստեղծելու հավաքման հարթակ չրի համար: Դիտարկել տարածաշրջանում զարգացող ճանապարհային և երկաթուղային ցանցերի զարգացման ծրագրերը (Ռուսաստանը և Իրանը կապող անդրկովկասյան միջանցքը): | MLT, բարձր            | առկա ենթակառուցվածքների և կատարողականի վերլուծություն                     |
| <b>Մրցակցության ընդլայնում</b>  | Մենաշնորհային գործարարության մոդելները չեն կարող արդյունաբերության պարսի/կլաստերի զարգացմանը փոխարինել: Հետևաբար անհրաժեշտ է, արդյունավետ մրցակցությանը զուգահեռ, շուկայական ենթակառուցվածքների զարգացում ապահովել: Հաշվի առնելով Հայաստանի դեպի ծով ելք չունենալու հետ կապված   | MLT, բարձր            | Մատակարարման շղթաների քարտեզագրում և                                      |

|  |  |                     |  |
|--|--|---------------------|--|
|  | <p>նյութատեխնիկական հարցերը, կարևոր է նաև բարձր արդյունավետություն ունեցող ներմուծման և արտահանման ընթացակարգերի ապահովումը՝ բարելավելու համար արտահանվող արտադրանքի ծախսերի և որակի մրցունակությունը: Ներմուծման և արտահանման ընթացակարգերի ներկայիս անարդյունավետությունը նվազեցնում է Հայաստանի ներդրումային գրավչությունը և վերջնական արտադրանքի մրցունակությունը:</p>                                       |                     | վերլուծություն   |
| <p><b>Սննդամթերքի անվտանգության միջազգային ստանդարտների համապատասխանության ապահովում</b></p>       | <p>Անհրաժեշտ է գործընթացների և ապրանքների նոր անվտանգության ընթացակարգերի իրականացման աջակցություն, իսկ շուկայի դիվերսիֆիկացիայի համար անհրաժեշտ պայման է պահածոների գործարանի մակարդակով ստանդարտների համապատասխանության սերտիֆիկատը: Նպատակը սննդամթերքի անվտանգության ստանդարտների համապատասխանության կարողությունների ստեղծումն է:</p>   | երկարաժամկետ, բարձր | Սննդամթերքի անվտանգություն, համապատասխանության ստանդարտների մասին գիտելիքների տարածում |
| <p><b>Հարմարեցված ֆինանսական և ապահովագրության մեխանիզմների հասանելիության կատարելագործում</b></p> | <p>Սա ենթադրում է խրախուսել բանկերին՝ նրանց կողմից ջերմոցների, միրգ և բանջարեղեն (Մ&amp;Բ) վերամշակող ընկերությունների համար նոր, երկարաժամկետ ֆինանսական արտադրանքի ստեղծման համար: Խարսխող ներդրողների փորձը նույնպես կարող է, առևտրային բանկերի հետ համատեղ, օգտագործվել համապարփակ մատակարարման շղթաների խորհրդատվական և ֆինանսական մեխանիզմների մշակման համար:</p>  | Կարճաժամկետ, բարձր  | Նոր ֆինանսավորման և երաշխիքային մեխանիզմների իրագործելիության ուսումնասիրություն       |
| <b>II. Գյուղատնտեսական խորհրդատվություն</b>  |  |                     |  |
| <p><b>Խորհրդատվություն, ծառայությունների տրամադրման բարելավում</b></p>                             | <p>Խորհրդատվության բարելավումն ավելի շատ պահանջում է առաջադիմական բարեփոխումներ և զարգացումներ, քան լիովին նոր մոտեցում: Դրա ուժեղ կողմերը հետևյալն են. աշխատանքային ծրագրերը հիմնված են ֆերմերների կարիքների վրա, դա լավ է ընդունվում ֆերմերների կողմից, ընդգրկում է Հայաստանի համայնքների մեծ մասը, դա լավ արդյունքներ է ցույց տալիս: Ծառայությունների որակը կարելի է բարելավել ավելացնելով խորհրդատուների</p> | MLT, բարձր          | Նախադրյալների հետազոտական տվյալների բացակայություն                                     |

|   |   |                      |  |
|---|---|----------------------|--|
|   | աշխատավարձերի և տրանսպորտի, շարունակական գործնական պարապմունքների և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառման համար հատկացվող բյուջետային աջակցությունը:  |                      |  |
| <b>Խորհրդատվությանը հատկացվող բյուջեի ավելացում</b>   | Ներկայիս բյուջեն շատ համեստ է թե՛ հարաբերական, թե՛ բացարձակ առումով: Բյուջետային աջակցության ավելացումը ներկա մակարդակից կարող է շատ մեծ տարբերություն առաջացնել սպասարկման որակի բարելավման առումով և մեծ ազդեցություն թողնել ոլորտի արտադրանքի վրա՝ առանց այլ բյուջետային ծրագրերից զգալի ռեսուրսներ հատկացնելու: Ծառայությունների որակը կարելի է բարելավել ավելացնելով խորհրդատուների աշխատավարձերի և տրանսպորտի, շարունակական գործնական պարապմունքների և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառման համար հատկացվող բյուջետային աջակցությունը: | Կարճաժամկետ, բարձր   |  |
| <b>Բարելավել ծախսարդյունավետությունը և ծախսաձածկումը</b>                                      | Գոյություն ունի ծախսերի արդյունավետությունը և ծախսաձածկումը չափավոր բարելավելու միջոց, թեև ծախսերի վերականգնման օպտիմալ թիրախը համարվում է 30%-ը: Ներկայումս ձեռք է բերվում ընդհանուր ծախսերի 20%-ը: Ինչպես խորհրդատվության, այնպես էլ ծառայությունների որակը կարող է զգալիորեն նվազել բարձր մակարդակով ինքնաձախսաձածկման ձգտելու պարագայում:   | Միջնաժամկետ, չափավոր |  |
| <b>Խթանել խորհրդատվության և ծառայությունների տրամադրման բազմապլան և բազմակարծիք մոտեցումը</b> | Բազմապլան մոտեցումը ներառում է նաև ծառայությունների մատուցման այլ մոտեցումներ: Գյուղատնտեսության նախարարությունը պետք է շարունակի աշխատել մի շարք ծառայություններ մատուցողների, այդ թվում ԳԱՄԿ-ների/ ԳԱՀԿ-ի, տեղական ՀԿ-ների և մասնավոր հատվածի մատակարարների հետ (ինչպիսին է CARD ագրոծառայությունը)՝ ըստ իրենց համեմատական ուժեղ կողմերի և մասնագիտացման ուղղությունների:   | Կարճաժամկետ, բարձր   |  |

|   |  |   |  |
|---|--|---|--|
| <p><b>ՏԾԿ-ների և ԱՕԿ-ների ազդեցության ստուգում</b></p>                                  | <p>ՏԾԿ-ների և ԱՕԿ-ների ազդեցությունն ուսումնասիրվում է՝ պարզելու համար դրանց ծառայություններից օգտվող ֆերմերների տեսակները և թիվը, վաճառքի տեսակը և ստացված գումարը, կենտրոնների շահութաբերությունը և այդ ծառայությունների գնահատումը ֆերմերների կողմից: Եթե հարցումները ցույց տան, որ նրանք կայուն լինելու հնարավորություն ունեն, ապա պետք է մտածել ԳԱՄԿ-ներն ավելի տեսանելի վայրեր տեղափոխելու և ծառայությունների սպեկտրն ընդլայնելու մասին:</p> | <p>Կարճաժամկետ, բարձր (հատկապես աղքատների սննդի բարելավված անվտանգության համար)</p> |  |
| <p><b>III. Սննդամթերքի անվտանգություն</b></p>   |  |   |  |
| <p><b>Ուժեղացնել սննդամթերքի անվտանգության օրենքների և կանոնակարգերի կիրարկումը</b></p> | <p>ՄԱՊԾ-ն պետք է ձգտի հստակեցնել գործող օրենսդրությունը և դրա իրագործումը, տեղեկատվական արշավ կազմակերպի գործող օրենսդրության և դրա փոփոխությունների վերաբերյալ, սննդամթերքի անվտանգության ապահովման ավելի մեծ ճկունություն ցուցաբերի, ինչպես նաև այլ տարբերակներ կիրառի փոքր ագրովերամշակողների նկատմամբ և, վերջապես, ապահովի ուժեղ տեսչական և կիրարկման կարողություններ:</p>   | <p>MLT, բարձր</p>   | <p>Փոքր ագրովերամշակողների համար սննդամթերքի անվտանգության համապատասխանության մատչելի տարբերակների բացահայտում</p> |
| <p><b>Ազգային խորհրդատվության և հավատարմագրման ուժեղացում</b></p>                       | <p>ՄԱՊԾ-ն պետք է առաջնորդի այս խնդիրների փաթեթին տրվող լուծումները՝ սկսելով մասնավոր խորհրդատվական ծառայությունների կարողություններն ամրապնդող միջոցառումներից: Պետք է սկսի նաև արտաքին ԱՄԻ-ի կողմից հավատարմագրման գնահատումը և անդրադառնա այն խնդիրներին, որոնք խոչընդոտում են դրա գործունեության միջազգային ճանաչումը:</p>  | <p>երկարաժամկետ, չափավոր</p>  | <p>ԱՄԻ-ի հավատարմագրման կատարողականի արտաքին գնահատում</p>   |
| <p><b>Ընդլայնել և արագացնել միջազգային հավատարմագրման հասանելիություն</b></p>           | <p>Անհրաժեշտ են միջազգային հավատարմագրման ծառայությունների բարելավված հասանելիություն և միջազգային հավատարմագրման ազգային լաբորատորիաներ: Միջազգային ճանաչում ունեցող ծառայությունները հեշտացնում են մուտքը միջազգային շուկաներ՝ սննդամթերքի արդյունաբերության ավելի առաջադեմ տարրեր և ծառայություններ մատուցող ազգային գործակալությունների և խորհրդատվական ձեռնարկությունների համար ուղենիշներ սահմանելու</p>                                     | <p>երկարաժամկետ, չափավոր</p>  |  |

|  |  |                           |   |
|--|--|---------------------------|---|
| <p><b>Ը</b></p>  | <p>համար:<br/>Ազգային լաբորատորիաների միջազգային հավատարմագրումը հեշտացնելու նպատակով ներդրումներ են պահանջվում նաև սարքավորումների և ուսուցման համար: Մանրամասնորեն անվտանգության օրենքների և կանոնակարգերի համապատասխանության խրախուսման և կիրարկման լայնածավալ միջոցառումները կնպաստեն, որ ոլորտում բարձրանա միջազգային հավատարմագրման ծառայությունների պահանջարկի ներկայիս ցածր մակարդակը:</p>   |                           |   |
| <p><b>Բարձրացնել արդյունաբերողների տեղեկացվածությունը ժամանակակից սննդամթերքի անվտանգության ծախսերի և պարտավորությունների վերաբերյալ</b></p> | <p>Ձեռնարկություններն աղոտ պատկերացում ունեն սննդամթերքի անվտանգության ժամանակակից համակարգերի ծախսերի և օգուտների մասին: Նաև ավելի շատ ջանքեր են անհրաժեշտ, որպեսզի բարձրանա ոլորտի ըմբռնումն առ այն, որ սննդամթերքի անվտանգության ժամանակակից համակարգերի ընդունումը պարտավորություն է, ոչ թե ընտրություն: Արդյունաբերության մտահոգությունը պետք է լինի այն հարցը, թե ինչպես ու երբ համապատասխանեցնել և ինչպես այդ փոփոխությունները ծախսարդյունավետ կերպով կատարել, ոչ թե ինչպես համապատասխանեցումից խուսափել կամ ուշացնել: ՄԱՊԾ-ի գլխավորությամբ հանրային իրազեկման արշավը կնպաստի տեղեկատվական այդ բացը լրացնելուն: Պետք է ներգրավված լինեն արդեն համապատասխանություն ձեռք բերած ոլորտի լիդերները, ինչպես նաև հեղինակավոր խորհրդատվական և հավատարմագրման ծառայությունները:</p> | <p>Կարճաժամկետ, բարձր</p> |   |
| <p><b>Ստեղծել սննդամթերքի անվտանգության միջին մասնագիտական կամ համալսարանական դիպլոմի</b></p>  | <p>Հատուկ միջին մասնագիտական կամ համալսարանական կրթական ծրագիր է անհրաժեշտ սննդամթերքի անվտանգության բավարար թվով կրթված և հմուտ մասնագետների առկայությունը շարունակաբար ապահովելու համար: Կարելի է նախատեսել տարածաշրջանային լուծում, քանի որ ԵՄ-ի և ԵՏՄ-ի սննդամթերքի անվտանգության համակարգին ծանոթ կրթված մասնագետների պահանջարկն անցնում է Հայաստանի սահմաններից դուրս:</p>   | <p>MLT, բարձր</p>         | <p>Դասընթացների կարիքների գնահատում</p> |

|   |  |                     |  |
|---|--|---------------------|--|
| ծրագիր  |  |                     |  |
| <b>IV. Գյուղատնտեսական հողերի շուկաները</b>                                     |  |                     |  |
| <b>Հողերի միավորման ծրագրի իրագործում</b>                                       | Անհրաժեշտ է հողերի միավորման համազգային ծրագիր՝ հողօգտագործման արդյունավետությունը բարելավելու և հողերի շուկայի զարգացումը դյուրացնելու համար: Կառավարությունը պետք է այս ծրագրի իրականացման համար անհրաժեշտ համարժեք իրավական դաշտն ապահովելու նպատակով դրա ղեկավարումը լիազորի որևէ հաստատության:  | երկարաժամկետ, բարձր |  |
| <b>Կադաստրային տվյալների բարելավում</b>   | Անհրաժեշտ է իրականացնել պետական և համայնքային հողերի, անտառների և ջրածածկ տարածքների համակարգված գրանցում, որպեսզի լուծվի համընկնման խնդիրը նոր հետեզոտության շրջանակում: Քանի որ կադաստրային քարտեզները չեն համապատասխանում իրականությանը, կառավարությունը պետք է նախաձեռնի առկա կադաստրային քարտեզների զանգվածային գնահատում և հողակտորների համակարգված վերահետազոտում կամ կադաստրային թվային քարտեզների թարմացում և կամ առկա քարտեզների փոփոխում: | Բարձր               | Առկա կադաստրային քարտեզների գնահատում և հողակտորների կանոնավոր վերահետազոտում թվային կադաստրային քարտեզները թարմացնելու նպատակով |
| <b>Առավել արդյունավետ հողերի մոնիթորինգի համակարգի մշակում</b>                  | Կառավարությունը պետք է մտածի ինտեգրված, վերլուծական-տեղեկատվական համակարգի ներդրման մասին՝ հողերի օգտագործումը մոնիթորինգի ենթարկելու համար, ինչպես, օրինակ՝ հողակտորների նույնականացման համակարգը (LPIS) կամ ֆերմերների ռեեստրը:  | MLT, բարձր          |  |
| <b>Համայնքային հողերի վարձակալության և օտարման արդյունավետության բարելավում</b> | Պետական և համայնքային հողերի արդյունավետ օտարումը հեշտացնելու նպատակով կառավարությունը պետք է իրականացնի պետական հողերի համակարգված վերագրանցում և թարմացնի կադաստրային գնահատման քարտեզները: Սա կնպաստի օտարման գործընթացի կարգավորմանը և ավելի շատ եկամուտներ ապահովելուն այն համայնքների համար, որտեղ հողերը վաճառվել են շուկայական արժեքից ցածր գներով, ինչպես նաև կավելացնի վաճառքն այնտեղ, որտեղ օտարումը խանգարում են բարձր                   | Միջնաժամկետ, բարձր  | Պետական հողերի արժեքի գնահատում և կադաստրային գնահատման քարտեզների   |



|  |  |                              |                                   |
|--|--|------------------------------|-----------------------------------|
|  | <p>գները: Միաժամանակ ուղեցույցներ մշակելու և համայնքապետարանների/քաղաքապետարանների համար ուսուցում իրականացնելու անհրաժեշտություն կա, որպեսզի բարձրանան նրանց հոդօգտագործման պլանավորման, հողերի օտարման և հողերի վարձակալության կարողությունները: Տեղական իշխանությունները նույնպես պետք է ապահովեն հողերի օտարման մասին տեղեկատվության հասանելիությունը ՁԼՄ-ների և իրազեկման ծրագրերի միջոցով:</p>   |                              | թարմացում                         |
| <p><b>Ուժեղացնել լքված հողերի քաղաքականությունը</b></p>                                | <p>Նախ պետք է նույնականացնել բոլոր լքված հողերը: Կլինեն դեպքեր, երբ լքված հողը գրանցված է, սակայն սեփականատերը հայտնի չէ, և դեպքեր, երբ հողի սեփականատերը ո՛չ հայտնի է և ո՛չ էլ գրանցված: Սեփականատիրոջ բացակայության հարցը նույնպես կարող է կարևոր դեր խաղալ, քանի որ որոշ սկզբնական սեփականատերեր կարող են մահացած լինել կամ հողակտորը մեկ ուրիշին փոխանցած: Քաղաքականությունը պետք է սոցիալապես ընդունելի լինի և հիմնավորված համապատասխան օրենսդրությամբ:</p>   | <p>Միջնաժամկետ , չափավոր</p> | <p>Լքված հողերի հայտնաբերում</p>  |
| <p><b>Բարելավել պետական և համայնքային հողերի սահմանագծումը</b></p>                     | <p>Անհամապատասխան սահմանագծումը հանգեցրել է նույն հողակտորի վաճառքի կամ վարձակալության հարևան համայնքների կողմից: Այս հարցը պետք է լուծեն տեղական ինքնակառավարման մարմինները, հատկապես այն դեպքերում, երբ համայնքները միավորվում կամ ընդլայնվում են:</p>   | <p>Միջնաժամկետ , չափավոր</p> |                                   |
| <p><b>Աջակցել գյուղական վայրերում անշարժ գույքի գործակալությունների զարգացմանը</b></p> | <p>Անշարժ գույքի գործակալությունները քաղաքային շրջաններում զարգացած են, իրենց կայքերում զետեղում են գույքի/ունեցվածքի տարածքների և գների վերաբերյալ տեղեկատվություն և լուսանկարներ: Համարժեք գյուղատնտեսական հողերի վերաբերյալ տեղեկատվությունը չափազանց սահմանափակ է կամ բացակայում է: Ավելին, դրանք ցրված են համայնքապետարաններում և քաղաքապետարաններում, ինչը խոչընդոտում է գյուղատնտեսական հողերի շուկաների ձևավորումը, ֆերմաների ընդլայնումը: Գյուղական վայրերում անշարժ գույքի գործակալությունների զարգացմանն ուղղված աջակցությունը կնպաստի այդ խոչընդոտի վերացմանը:</p> | <p>Միջնաժամկետ</p>           |                                   |
| <p><b>Իրականացնել հողերի</b></p>   | <p>Հողերի կառավարման գնահատման շրջանակն (LGAF) առաջարկվում է հողերի կառավարման կարգավիճակը գնահատելու համար: LGAF-ը Համաշխարհային բանկի</p>  | <p>Միջնաժամկետ , բարձր</p>   | <p>Հողերի կառավարման շրջանակի</p> |

|   |   |                     |  |
|---|---|---------------------|--|
| կառավարման գնահատման շրջանակը (LGAF)                            | կողմից նախագծված գործիք է, որն օգնում է երկրներին գնահատելու հողերի կառավարման իրենց քաղաքականությունը և պրակտիկան և չափորոշիչներ է ապահովում համեմատության և մոնիթորինգի առաջընթացի համար: Այն իրականացվել է ավելի քան 40 երկրներում, այդ թվում՝ Մոլդովայում, Վրաստանում, Ուկրաինայում և Խորվաթիայում:   |                     | բացակայություն   |
| <b>V. Գյուղատնտեսության ապահովագրումը և ռիսկերի կառավարումը</b> |   |                     |  |
| Համապատասխան իրավական դաշտի ստեղծում                            | Սա շատ կարևոր է, բայց հաճախ՝ դժվար և կարող է կառավարությունից ամուր կամքի դրսևորում պահանջել: ԱՊՀ երկրներում այդ կարևոր պահանջը հաճախ խոչընդոտվում է հին ոճի բյուրոկրատիայով:   | MLT, բարձր          |  |
| Համապատասխան վիճակագրական տեղեկատվության տրամադրման ապահովում   | Իդեալական վիճակում վիճակագրական տվյալները պետք է հասանելի լինեն 20+ տարի շարունակ յուրաքանչյուր մշակաբույսի և յուրաքանչյուր վարչական միավորի (շրջան, մարզ, համայնք, և այլն) համար: Ֆերմայի մակարդակով բերքատվության վերաբերյալ պատմական տվյալները նույնպես ցանկալի են: Հետագա պատմական տվյալները եղանակային և ռիսկային իրադարձությունների վերաբերյալ պահանջվում են MPCİ արտոնյալ դրույքաչափերի հաշվարկման և անվանական ռիսկերի ծրագրերի համար: Հնարավոր է, որ վիճակագրական տվյալների բացակայության դեպքում օգտագործվեն մշակաբույսերի բերքատվության մոտավոր թվեր և փորձագիտական կարծիք, սակայն դա այնքան էլ վստահելի չէ, այնպես որ նման տվյալները պետք է զգուշությամբ կիրառվեն: | Միջնաժամկետ , բարձր | Յուրաքանչյուր մշակաբույսի և յուրաքանչյուր վարչական միավորի վերաբերյալ վիճակագրական տվյալների և ժամանակահատվածի պակաս |
| Գյուղատնտեսական ապահովագրության կարողությունների ստեղծում       | Ուսումնասիրված երկրներից շատերը գյուղատնտեսական ապահովագրության հարուստ փորձ ունեցող ապահովագրական ընկերություններ չունեն: Այլ երկրներում ապահովագրության ոլորտը փոքր է, իսկ մասնավոր ապահովագրական ընկերությունները սահմանափակ կարողություն ունեն գյուղատնտեսական ռիսկերն ապահովագրելու համար: Այս իրավիճակում կառավարությունը պետք է գլխավորի մասնավոր ապահովագրողներին ցույց տրվող աջակցությունը և ապահովի, որ նրանք ժամանակ և ռեսուրսներ ունենան գյուղատնտեսական ռիսկերն իրենց վրա վերցնելու կարողություններ ձեռք բերելու համար: Խորհուրդ է տրվում նաև բոլոր ապահովագրողների խիստ կարգավորում՝ սուբսիդիաների չարաշահումներից զերծ   | MLT, բարձր          |  |

|  |  |                       |  |
|--|--|-----------------------|--|
|  | մնայու և հաճախորդների վստահությունը պահպանելու համար:  |                       |  |
| <b>Ապահովել համարժեք հաշվարկման և կորստի փոխհատուցման կարողությունները և ակտուարական ծառայություններ ի հասանելությունը</b> | Հաշվարկման և կորստի ճշգրտման գիտելիքներ կարելի է ձեռք բերել վերաապահովագրողների կամ այլ երկրների ապահովագրողների հետ անմիջական շփումների միջոցով: Փորձը ցույց է տալիս, որ ցանկացած երկիր 2-3 տարվա ընթացքում կարող է չափավոր ծախսերով ձեռք բերել անհրաժեշտ ծավալների մասնագիտական գիտելիքներ և հմտություններ: Հիմնական դրույքաչափերի հաշվարկման մեթոդները հանրությանը մատչելի են, իսկ ավելի բարդ մեթոդաբանություններ կարելի է ձեռք բերել ողջամիտ գներով: Որոշակի ճշգրտումներ կարող է պահանջվել, սակայն դա կարելի է անել այլ երկրների ակտուարական ծառայություններ պատվիրելու միջոցով: | Միջնաժամկետ , չափավոր |  |
| <b>Վերաապահովագրման դյուրացումը</b>  | Որակյալ վերաապահովագրման հիմնական խոչընդոտը փոքրածավալ ապահովագրական պորտֆելն է և ապահովագրական ընկերությունների ցածր մակարդակի տեխնիկական գիտելիքները: Խոշոր վերաապահովագրողները սովորաբար չեն հետաքրքրվում մեկ տարվա ընթացքում 500 հազար դոլար/եվրո ապահովագրական վճարից պակաս վերաապահովագրման ծրագրերով: Սակայն այդ վերաապահովագրողները կարող են իջեցնել իրենց որակավորման պահանջները, եթե հաճախորդը/երկիրը ապացուցի, որ ծրագիրն ապագա աճի ներուժ ունի:  | MLT, չափավոր          |  |
| <b>VI. Հանրային ծախսերը</b>  |  |                       |  |
| <b>Հանրային ծախսերի կենտրոնացումը մեծ ծրագրերի վրա</b>   | Հանրային ծախսերը կարող են ավելի արդյունավետ օգտագործվել բյուջետային աջակցությամբ մի քանի մեծ և ավելի կայուն ծրագրերին կամ էական հանրային ծառայությունների մատուցումն ուժեղացնող վերահատկացումներով:<br>Գյուղատնտեսությանը հատկացվող ընթացիկ հարաճուն ծախսերի ուղղակի բյուջետային աջակցությունը բնորոշվում է բազմաթիվ փոքր, անկանխատեսելի ֆինանսավորված սուբսիդավորման և դրամաշնորհային ծրագրերի զարգացումով, հատկապես՝ գյուղատնտեսության նախարարությունում: Այս ծրագրերից մի քանիսի ազդեցությունը հարցականի տակ է: Դրանց փոքր չափերը և շարունակականության բացակայությունը            | Միջնաժամկետ , բարձր   |  |

|   |   |                     |  |
|---|---|---------------------|--|
|   | բացառում է զգալի ֆինանսական ռեսուրսների փոխանցումը, և քիչ հավանական է, որ կարող է խրախուսել մասնավոր ներդրումները հարակից գործունեության մեջ:   |                     |  |
| <b>Վերանայել հանրային ծախսերի հավասարակշռությունը՝ կապված խորհրդատվության ծառայությունների տրամադրման հետ</b> | <p>Հանրային և մասնավոր հաստատությունների և մարդկային կապիտալի միջև ներդրումների ավելի լավ հավասարակշռության հասնելու ձգտումը հակադրվում է ֆիզիկական ենթակառուցվածքների ներդրումներին: Կապիտալ ծախսերը դեռ գերիշխում են ոռոգման, ջրամատակարարման և դրենաժի/ցամաքուրդի ծրագրերի ներդրումներում, որոնք կազմում են 2014 թ. գյուղատնտեսության ոլորտի հանրային ներդրումների 91%-ը, դրանց հաջորդում են բնապահպանական ներդրումները (8%): Ներդրումային ծախսերի միայն 1%-ն է ներկայումս հատկացվում գյուղատնտեսական ծառայությունների տրամադրման համար: Սա անհանգստացնող միտում է, քանի որ պետք է գիտելիքների վրա հիմնված տնտեսություն ստեղծել՝ գյուղատնտեսության արդիականացման և առևտրայինացման կարողությունով և հիմնել գյուղատնտեսական ապրանքների արտահանումով պայմանավորված ոլորտ:</p>   | Միջնաժամկետ , բարձր |  |
| <b>Ավելացնել ծառայությունների տրամադրման բյուջետային հատկացումները</b>  | <p>Երաշխավորված են առանցքային հանրային ծառայությունների աճող բյուջետային հատկացումները, հատկապես՝ ծառայությունների համար, օրինակ՝ խորհրդատվության, որոնք էապես նպաստում են գիտելիքահենք տնտեսության զարգացմանը, մշակաբույսերի պաշտպանությանը, ինչը բարելավում է արտադրողների կարողությունները մշակաբույսերի արտադրության տատանումների ռիսկերի մեղմման գործում: Ընթացիկ ծախսերի շատ փոքր կտրուկ աճ է իրականում եղել էական հանրային ծառայությունների տրամադրումը բարելավելու համար՝ չնայած ոլորտի շարունակական աճին, ինչի մասին վկայում է գյուղատնտեսական ՀՆԱ-ի իրական արժեքի 26% աճը 2010 - 2014 թթ.: Աճող ոլորտը պահանջում է աճող հզորություն հանրային ծառայություններ տրամադրելու համար, որոնք երաշխավորում են ոլորտի պատշաճ գործունեությունը: Բյուջետային հատկացումները միայն սննդամթերքի անվտանգության և կենդանիների առողջության համար են ավելացել, մինչդեռ հանրային ծառայությունների մյուս ծախսերը կա՛մ ընկել են, կա՛մ իրական առումով հաստատուն մնացել:</p> | Միջնաժամկետ , բարձր |  |